

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015
ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ

2015 թվականի մարտի 30-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՏՀՏ ոլորտը ներկայացնող 3 խոշորագույն՝ «Վիվասել ՄՏՍ», «Սինոփսիս Արմենիա», «Յունիքոմփ» ընկերությունների հետ կնքվել է փոխընթացման հուշագիր՝ համաձայն որի հանրակրթական 5 ավագ դպրոցներում մեկնարկել է աննախադեպ կրթական նոր ծրագիր՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հեռահաղորդակցության հիմունքներ» և «Միկրոէլեկտրոնիկա» առարկաների ներդրմամբ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակում և ներդրում

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել և հաստատվել է վարկանիշավորման նոր մեթոդաբանությունը, որով կիրականացվի վարկանիշավորման գործընթացը:

«Ազգային երգ ու պար» առարկայի չափորոշիչի և ծրագրի մշակում և հաստատում

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 02.07.2015թ. N 643-Ա/Ք հրամանով 2015-2016 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության ևս 100 հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարանում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան (50-ը Երևանում, 50-ը՝ մարզերում), իսկ 03.09.2015թ. N 760-Ա/Ք հրամանով հաստատվել է «Ազգային երգ ու պար» առարկայի 6-րդ դասարանի ծրագիրը: Ծրագիրը շարունակական է. 2016-2017 ուսումնական տարվանից սկսած հանրապետության 1-2 մարզերի բոլոր դպրոցներում կներդրվի «Ազգային երգ ու պար» առարկան:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, պաշտպանության նախարարությունների և «Երկրապահ կամավորական միություն»

2015 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, պաշտպանության նախարարությունների և «Երկրապահ կամավորական միություն»

հասարակական կազմակերպության միջև՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, ՀՀ բոլոր դպրոցներում ձևավորվել են պատանի երկրապահների ակումբներ: Նախաձեռնության նպատակը դպրոցականների՝ վաղ տարիքից ռազմահայրենասիրական դաստիարակությունն է, ազգային գաղափարախոսության և արժեքների պահպանումը, հայապահպան մտածելակերպի ձևավորումը: Ակումբները կկազմակերպեն տարբեր միջոցառումներ՝ հայրենիք, ազգային մշակույթի, մշակութային բազմազանություն, հայկական մշակույթի դերը տարածաշրջանի և համաշխարհային մշակույթի զարգացման գործում, ավանդույթներ, հայկական էպոս, հայկական բնաշխարհ, բնապահպանություն, արվեստ, հայոց լեզու, գիր, գրականություն և այլն թեմաներով:

Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար դասագրքերի տպագրություն

Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար պետական բյուջեի միջոցների հաշվին տպագրվել և տրամադրվել են Եզդիերեն «Այբբենարան», Եզդիերեն 2, Եզդիերեն 8, Եզդիերեն 12 դասագրքերը, Եզդիերեն ծրագիր 1-12, Քրդերեն 8, Քրդերեն 9, Քրդերեն քերականություն 5-9 դասագրքերը:

Ազգային փոքրամասնությունների դպրոցների ուսուցիչների վերապատրաստում

2015 թվականին իրականացվել է ասորերենի 7 ուսուցիչների վերապատրաստում:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը ընդլայնվել է 43 դպրոցով

ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը 2015թ. ավելացել է 43-ով: Այժմ ՀՀ-ում գործում է ներառական կրթություն իրականացնող շուրջ 182 հանրակրթական ուսումնական հաստատություն, որտեղ ընդգրկված են 4708 աշակերտներ:

Համաժողովների, միջոցառումների մասնակցություն և կազմակերպում

«Այցելություն ՀՀ Նախագահի նստավայր» ծրագրի իրականացում, որի շրջանակներում հանրապետության ավագ և միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտները հնարավորություն են ստանում այցելել ՀՀ

Նախագահի նստավայր, մասնակցել ճանաչողական էքսկուրսիայի: Դեկտեմբերի 24-ին նախատեսվում է ՀՀ 4 սահմանամերձ մարզերի՝ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Տավուշի 11-12 տարեկան դպրոցականների այցելություն ՀՀ Նախագահի նստավայր՝ Ամանորի միջոցառմանը մասնակցելու համար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ապեստրավորման և տարակարգերի շնորհման գործընթացի կազմակերպում

- 2015 թվականին ատեստավորվել են շուրջ 7000 ուսուցիչ:
- 2015 թվականի ընթացքում առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել 320 ուսուցչի, իսկ 2-րդ աստիճանի տարակարգ՝ 5 ուսուցչի:

Պետական բյուջեով տպագրվող դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հայտերի պատրաստում

- Պետական բյուջեով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում գործածության երաշխավորված այլընտրանքային դասագրքերը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանն են ներկայացվել տարբեր հրատարակչություններից, անհատ հեղինակների կողմից մշակված ուսումնական նյութեր:

Նախադպրոցական կրթություն. նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնում

ՀՀ մարզերում շուրջ 25 նախակրթարանի հիմնում՝ առնվազն 550 երեխայի ընդգրկմամբ: «Կրթության բանրիավում» վարկային նոր ծրագրի շրջանակներում նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացումն արդյունավետ ապահովելու նպատակով ՀՀ ԿԳ նախարարի 10.03.2015թվականի թիվ 142-Ա/Ք հրամանով ստեղծվել է կառավարման մարմին-Հանձնաժողով: 2015 թվականին նոր միկրոծրագրեր իրականացելու համար տարվել են նախապատրաստական աշխատանքներ: ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցները ուսումնասիրել են մարզերից ստացված տեղեկատվությունը, վերլուծել են համայնքներում նախադպրոցական ծառայությունների առկայության ցուցանիշը, նախադպրոցական ծառայություններում ընդգրկված և չընդգրկված երեխաների թիվը, նախակրթարանների ստեղծման կարիքները և առաջնահերթությունները:

Դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաներ

2015թ. անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկաներից, որին մասնակցել են շուրջ 1500 աշակերտ, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» և «Կենսաբանություն» «Աշխարհագրություն» առարկաներից՝ շահելով 23 մեդալ՝ 1 ոսկե, 9 արծաթ և 13 բրոնզ: 2015թ. մայիսի 3-10-ը ՀՀ-ում անկացվել է դպրոցականների քիմիայի 49-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել են 15 երկրների 92 սովորող: Հայաստանի թիմը օլիմպիադային մասնակցել է 10 հոգով:

ՀՀ պետական բյուջեի «Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ» ծրագրով 2015թ. մասնագիտացված հանրակրթական ուսուցում իրականացնող թվով 6 հաստատությունների գերազանց առաջադիմություն ցուցաբերած, օլիմպիանդաներում, մրցույթներում և այլ միջոցառումներում մրցանակային տեղեր գրաված 283 սովորողների տրամադրվել է շուրջ 4 մլն. դրամ կրթաթոշակ:

Հանրապետական նշանակության մրցույթների կազմակերպում

- «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» ամենամյա մրցույթի հանրապետական փուլին այս տարի մասնակցել են 34 մանկավարժներ՝ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից: Մրցույթի ամփոփումից հետո, հանձնաժողովները որոշել են «Տարվա լավագույն ուսուցչին», «Տարվա լավագույն տնօրենին» և «Տարվա լավագույն դաստիարակին»: Տարվա լավագույն ուսուցչին և դաստիարակին ՀՀ վարչապետը պարգևատրել է ավտոմեքենաներով: Մրցույթին մասնակից մյուս ուսուցիչները խրախուսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի «Ոսկե հուշամեդալով», պատվոգրերով և շնորհակալագրերով:
- «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», բնագիտական /»Ֆիզիկա», «Քիմիա»,

«Կենսաբանություն»/ առարկաների ուսուցիչների և դասվարների ամենամյա մրցույթի մարզային փուլին մասնակցել են շուրջ 210 ուսուցիչներ, իսկ հանրապետական փուլին՝ 46 ուսուցիչներ: Մրցույթի հանրապետական փուլում հաղթած ուսուցիչները պարգևատրվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցող հանդիսավոր մրցանակաբաշխության ժամանակ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից:

- Տարվա ընթացքում հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել են հուշ-երեկոներ, գրական-երաժշտական հանդեսներ, բաց դասեր՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին, Հայոց հարցի պատմությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Տեղերում կազմակերպել են նաև հանդիպումներ քաղաքական և հասարակական անվանի գործիչների, Մեծ Եղեռնի զոհերի ժառանգների հետ, սովորողներն այցելել են Հայոց ցեղասպանության թանգարան, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողներ: «Հայոց պատմություն» առարկայից աշակերտներին հանձնարարվել է ինքնուրույն հետազոտական աշխատանքներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության խնդիրներին:

armeniangenocide100.org կայքում «Պատմի՛ր քո պատմությունը» խորագրի ներքո 8-12-րդ դասարանների սովորողները հնարավորություն են ունեցել գրել իրենց ընտանիքների իրական պատմությունների մասին:

Հանրապետության բոլոր դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողները, 2015 թվականի մարտի 24-ին, դասղեկի ժամին, պատրաստել են թղթե անմոռուկներ: Անմոռուկները տուփերով տեղափոխվել են Ծիծառնակաբերդ, և ապրիլի 24-ին որպես նվեր տրվել են Հայաստան ժամանած հյուրերին:

Հանրապետության բոլոր դպրոցներում ապրիլի 17-ին անցկացվել է դաս՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին. 5-12-րդ դասարանի սովորողների համար ընթերցվել է Հռչակագիրը: Ճարտարապետության և շինարարության «Հայաստանի ազգային համալսարան»

հիմնադրամի Մ.Աբեղյանի անվան N 3 ավագ դպրոցում Հոչակագրին նվիրված դաս է անցկացրել ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի՝ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը իմաստավորելու և արժևորելու, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով, **Ծիծեռնակաբերդի բարձունքում, Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի մոտ Երևանի ավագ դպրոցների 10-11-րդ դասարանների աշակերտները 2015 թվականի ապրիլի 1-24-ը, ժամը 10-18-ը ներառյալ, պատվո պահակ են կանգնել:**

Հոկտեմբեր ամսվա ընթացքում դպրոցներում կազմակերպվել են **բաց դասեր՝ նվիրված ազգերի ցեղասպանություններին. եղեռն, սեյֆո, հոլոքոստ, մեգալի, ռուանդական, աշակերտներին ներկայացվել է աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների մասին տեղեկատվություն:**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարվել է նաև **շարադրությունների մրցույթ՝ «Հիշում եմ և պահանջում» վերնագրով**, որն ամփոփվել է դեկտեմբերի 3-ին՝ Ցեղասպանության թանգարանում, որով էլ ամփոփվել են Հայոց ցեղասպանության 100 ամյա տարելիցին նվիրված միջոցառումները: **Հաղթող 15 աշակերտները պարգևատրվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:**

Համագործակցություն միջազգային, տեղական և հասարակական կազմակերպությունների հետ

- Հանրակրթության վարչությունը համագործակցել է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, ՀՀ արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի, Համաշխարհային Բանկի երևանյան գրասենյակի, «Փրկեք երեխաներին» կազմակերպության, «Հայկական Ալիանս Ֆրանսեզ» կրթամշակութային կազմակերպության, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան, Ֆրանսիայի դեսպանատան, ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիայի, «Հայաստանի պատանեկան նվաճումների», «Երիտասարդական նվաճումների», «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան գրասենյակի, GIZ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և այլն:

ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 55 պետական ուսումնական հաստատություններում (25 ՆՄՈՒՀ, 24 ՄՄՈՒՀ, 4 կրթահամալիր, 1 ԲՈՒՀ, 1 հիմնադրամ): **55 պետական ուսումնական հաստատություններում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրերով 2015 թվականի դրությամբ սովորում է շուրջ 8150 ուսանող (որոնցից 7825-ը՝ անվճար հիմունքով), և աշխատում է 983 դասախոս ու արտադրական ուսուցման վարպետ:**

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 82 պետական ուսումնական հաստատություններում (71 ՄՄՈՒՀ, 7 ԲՈՒՀ, 2 կրթահամալիր, 2 հիմնադրամ): Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններից 67-ը գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ:

82 պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորում է շուրջ 28500 ուսանող (որոնցից 15367-ը՝ անվճար հիմունքով), և աշխատում է շուրջ 4000 դասախոս:

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. մարտի 17-ի թիվ 161-Ա/Ք հրամանով հաստատվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստումներ իրականացնելու համար երաշխավորված կազմակերպությունների ցանկը՝ Ուսուցման ազգային հիմնադրամ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Մաստեր Սթայլ» ՍՊԸ, «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա» ՀԿ: Տնօրենների և հավակնորդների թեկնածուների վերապատրաստման գործընթացն ավարտվել է: ՀՀ կրթության և գիտության նախարարի ս/թ մայիսի 11-ի թիվ 359-Ա հրամանով հաստատվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրված անձանց ցուցակը: **Հավաստագրմանը մասնակցել է 58 անձ, որից 55-ը ստացել է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր): Ներկայումս ընթանում է հավակնորդների թեկնածուների վերապատրաստման երկրորդ փուլը, իսկ հավաստագրման քննությունը նախատեսվում է կազմակերպվել ս/թ դեկտեմբերի 25-ին:**

2. Մշակվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. մարտի 27-ի թիվ 203-Ն հրամանով հաստատվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը», որը պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

3. Մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի մայիսի 11-ի թիվ 419-Ա/Ք հրամանով հաստատվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգը», համաձայն որի ս/թ հունիսին անցկացվել են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները: Քննություններին մասնակցել է 24 շրջանավարտ, որից 17-ը ստացել է պետական նմուշի դիպլոմ:

4. ՀՀ շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 10-ին N 600-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2015/2016 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը», ըստ որի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ըստ մասնագիտությունների հատկացվել է **4117 անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով**

ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 5411:

5. Համաձայն 2014 թվականի հունիսի 5-ի «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-17-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ)՝ ամբողջությամբ վերանայվել և ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ին հաստատվել է «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշումը:

6. Վերանայվել է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) մասնագիտությունների ցանկը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին, Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագիտական դասակարգիչներին: Վերանայված տարբերակը հավանության է արժանացել Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի կողմից: Շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց հետո մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) մասնագիտությունների ցանկը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն և հաստատվել է 2015 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության N 1139-Ն որոշմամբ, որը ուժի մեջ է մտնելու 2016 թվականի հունվարի 1-ից:

7. Մշակվել և Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի նիստով հաստատվել են ՄԿՈՒ պլանավորման և կատարողականի կառավարման համակարգի մոդելը և դրա

հիման վրա մշակված վերապատրաստման ծրագիրը: **2015 թվականին իրականացվել է վերապատրաստում ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենների տեղակալների, կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների, կրթության և գիտության նախարարության, ՄԿՈՒԶԱԿ-ի և Ուսուցման ազգային հիմնադրամի 184 աշխատակիցների համար:**

8. Մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում **վերապատրաստվել են (ընդհանուր թվով 1315).**

- ՄԿՈՒ 20 հաստատությունների 42 տնօրեններ և փոխտնօրեններ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման հարցերով,
- ՄԿՈՒ բոլոր ուսումնական հաստատությունների տնօրեններ, ՄԿՈՒԶԱԿ-ի անդամներ, ԿԳՆ համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներ, ուսուցման ազգային հիմնադրամի աշխատակիցներ, ՄԿՈՒԶԱԿ-ի աշխատակիցներ՝ ընդհանուր թվով 184 մարդ, ՄԿՈՒ պլանավորման և կատարողականի կառավարման հարցերով,
- ՄԿՈՒ հաստատությունների 1016 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ,
- ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների 43 անդամներ,
- պետական կրթական չափորոշիչների նախագծեր մշակող 30 փորձագետներ:

9. 2015թ. մշակվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 10 պետական կրթական չափորոշիչներ: Մշակված 10 պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվել են նաև ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը: Պետական կրթական չափորոշիչները ստացել են դրական փորձագիտական եզրակացություն ոլորտային հանձնաժողովների կողմից, հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով և 2016-2017 ուսումնական տարվանից փորձնական կներդրվեն ուսումնական հաստատություններում: Ներկայումս մշակված պետական կրթական չափորոշիչների թիվը կազմում է 160.

10. 2015 թվականին վերանայվել են նախկինում մշակված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչներ: Վերանայված 10 պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվել են ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը:

11. 2015թ. մշակվել են համակարգում առկա մասնագիտությունների համար 15 ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և ուսումնամեթոդական նյութեր:

12. Dasaran.am կայքէջում ստեղծվել և գործում է նախնական և միջին մասնագիտական կրթության տեղեկատվական հարթակը:

13. Պատրաստվել և տպագրվել են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագրի 2015 թվականի համարները:

14. 2013 թվականից մինչ այժմ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ և Եվրոպական կրթական հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է աշխատանքներ 22 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ: 2015 թվականին մեկնարկել են մշտադիտարկման աշխատանքներ՝ ուղղված ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում 2014 թվականի ընթացքում կարիերայի պատասխանատուների պատրաստման և կարիերայի ուղղորդման աշխատանքների իրականացման գնահատմանն ու ուսումնասիրմանը:

15. Մշակվել և «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի Միջգերատեսչական մեթոդական խորհրդի կողմից հաստատվել է «Կարիերայի կառավարում» մոդուլային ծրագիրը: «Կարիերայի կառավարում» մոդուլային ծրագիրը ուսումնական հաստատություններում որպես կամընտրական առարկա ներդնելու հարցը գտնվում է քննարկման շրջանում:

16. 2015 թվականի օգոստոսի 11-16-ը Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում կայացել է «Աշխարհի հմտություններ» միջազգային մրցույթը: «Աշխարհի Հմտություններ» 2015 43-րդ միջազգային մրցույթին Հայաստանի թիմը ներկայացել է հետևյալ մասնագիտություններով՝ «Մեխատրոնիկա», «SS ցանցային համակարգերի կառավարում» և «Ոսկերչություն»: Հայաստանի թիմի

բոլոր անդամները ստացել են վկայականներ՝ «Աշխարհի հմտություններ» միջազգային մրցույթին ակտիվ մասնակցության և արժեքավոր ներդրման համար:

17. Գերմանիայի Ֆելդաֆինգ քաղաքում ս.թ. մայիսի 18-22-ը կայացած «Գարնանային ակադեմիա» ծրագրի շրջանակներում քննարկվել և հավանության է արժանացել «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» վերապատրաստման մոդուլի մշակման և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում պիլոտավորման ծրագիրը: Մշակվել են ծրագիրը, ծրագրի իրականացման ժամանակացույցը, ՄԿՈՒ կազմակերպությունների ցանկը (ընդհանուր թվով ծրագրին պետք է մասնակցի 4 ՄԿՈՒ հաստատություն), որտեղ Ծրագիրը նախատեսվում է ներդնել, ինչպես նաև ծրագրի թիրախային ոլորտները՝ զբոսաշրջություն, գինեգործություն և ճշգրիտ ճարտարագիտություն: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի (ՓՄՁ ՁԱԿ) և ԳՄՀԸ-ի ներկայացուցիչների կողմից կազմակերպվել են վերապատրաստումներ ՄԿՈՒ համակարգի կառավարման ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև ընտրված ուսումնական հաստատությունների դասախոսների համար, որոնք ստացել են համապատասխան հավաստագիր «Ձեռնարկատիրական և ձեռներեցության հմտությունների զարգացում» մոդուլը դասավանդելու համար:

18. 2014թ. մշակվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» պորտալը (www.vetarmenia.am)՝ որպես կրթական ցանցերը սպասարկող էլեկտրոնային գործիք: 2015 թվականին իրականացվել է և ներկայումս ընթացքի մեջ է տվյալների մուտքագրման գործընթացը:

19. Գործընկերային կապեր հաստատելու, կրթական, մշակութային հարաբերությունների զարգացմանը նպաստելու նպատակով 12 տարածաշրջանային գերազանցության կենտրոնների առաջատարությամբ մարզերում գործող պետական արհեստագործական ուսումնարանների և քոլեջների միջև ստեղծվել են մարզային կրթական ցանցեր: **2015թ. կնքվել են երկկողմ և եռակողմ համագործակցության համաձայնագրեր 35 արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև:** Համաձայնագրերում ներկայացված

մարզային ցանցերի կառավարմանն ու գործունեությանն առնչվող միջոցառումները ներառվել են տարածաշրջանային ՄԿՈՒ կենտրոնների բիզնես պլաններում:

20. Երկու նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում (Երևանի զարդարվեստի և Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարաններում) ավարտվել են սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար անհրաժեշտ հարմարություններով(սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ, վերելակներ) հարմարեցման աշխատանքները:

21. Թվով 5 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել և ս/թ սեպտեմբեր ամսվա դրությամբ ամբողջությամբ ավարտվել են վերանորոգման աշխատանքները:

Աշխատանքներն իրականացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության

կողմից: 5 ուսումնական հաստատություններին սարքավորումներ և գույք տրամադրելու նպատակով մշակվել են նյութատեխնիկական բազայի 17 չափաբաժնի համար տեխնիկական բնութագրերը: 10 չափաբաժնով գնման մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որից 8 չափաբաժինների մասով սարքավորումները ամբողջությամբ տեղադրվել են: Մնացած 2 չափաբաժինները պայմանագրերում նշված ժամկետում չմատակարարելու կապակցությամբ և դրանից բխող այլ խնդիրների ծագման պատճառով, ՀՀ ԿԳ նախարարության կողմից միակողմանի լուծվել է համապատասխան պայմանագրերը: 7 չափաբաժնով 2015թ. հոկտեմբեր ամսին հայտարարված կրկնակի մրցութը չի կայացել հայտ չլինելու պատճառով: ՀՀ ԿԳ նախարարությունը 2015թ. հոկտեմբերի 28-ի թիվ 01/19.3/13612-15 գրությամբ առաջարկ է ներկայացրել ՀՀ կառավարություն նշված 7 չափաբաժինների համար նախատեսված ֆինանսավորումը 2016թ. տեղափոխելու վերաբերյալ:

22. 2015 թվականի սեպտեմբեր ամսին Հայաստան է ժամանել Եվրահանձնաժողովի փորձագիտական առաքելություն իրականացնող խումբը, որը բավարար է գնահատել Եվրամիության բյուջետային աջակցության ծրագրի չորրորդ հատկացման շրջանակում իրականացված նախապայմանների իրականացումը և կատարված աշխատանքները:

23. Մշակման փուլում է գտնվում ՄԿՈՒ ոլորտում Եվրամիության հետ համագործակցության նոր ծրագիրը՝ գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման միջոցով աշխատաշուկայի արդյունավետությունը և ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությունը բարձրացնելու նպատակով:

24. 2015 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Սկոլկոլո» Մոսկվայի կառավարման դպրոց ոչ պետական ուսումնական հաստատության միջև նախաձեռնվել է կնքել մտադրությունների հուշագիր, որի շրջանակում նշված դպրոցի կողմից կմշակվեն վերապատրաստման գործիքներ՝ ուղղված ՄԿՈՒ հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

25. ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) նախաձեռնությամբ կողմից «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի (www.ipsc.am) կողմից 2015 թվականի նոյեմբեր ամսին իրականացվել է «Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների կարիքների գնահատման հետազոտություն», որի նպատակն է նպաստել միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացմանը Հայաստանում:

26. Հայաստանի ՄԿՈՒ համակարգի աշխատանքի, իրականացվող բարեփոխումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ հանրությանը և շահառուներին տեղեկացնելու նպատակով մամուլում տպագրվել են անհրաժեշտ նյութեր, տրվել են հեռուստահաղորդումներ:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1) Նկատի ունենալով ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի (համապատասխան որակավորումների) հետ կապված խնդրի կարգավորման և իրավունքների ապահովման անհրաժեշտությունը՝ 2015 թվականին կազմակերպվել են բակալավրի կրթական աստիճանի ամփոփիչ ատեստավորման քննություններ (քննությունները

կազմակերպվելու են մինչև 2016/2017 ուսումնական տարվա ավարտը), որի արդյունքում **Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների 311 շրջանավարտներից բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնել է 186-ը /59.8%/** և ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ տվյալ մասնագիտության համար նախատեսված բոլոր ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտների ոչ պետական նմուշի նախկին դիպլոմը փոխարինվելու է համապատասխան մասնագիտության և որակավորման բակալավրի պետական նմուշի դիպլոմով:

2) Սահմանված կարգով շրջանառելու նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացվել (30.10.2015թ.) **«Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու օրենքների նախագծերը, որի արդյունքում կսահմանվեն ու կհստակեցվեն «նպատակային կրթություն» հասկացությունը և նպատակային ընդունելության հետ կապված հարցերը, ինչպես նաև՝ նախագծերի ընդունումից հետո կկարգավորվի պետական պատվերի շրջանակում համապատասխան որակավորմամբ մասնագետների պատրաստման բարձրագույն և հետբուհական նպատակային կրթության հետ կապված հարաբերությունները:**

3) ՀՀ կառավարության կողմից հաստատված նոր մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան **հաստատվել է ՀՀ բուհերի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 2016/2017 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը**, որի հիման վրա իրականացվում է ՀՀ բուհերում ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի ընդունելության գործընթացը, պայմանավորված հանրապետության տնտեսության, գիտության զարգացման կարիքներին համապատասխան և պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում համապատասխան մասնագետների պատրաստման անհրաժեշտությամբ:

4) Կարևորելով ՀՀ սահմանամերձ մի շարք համայնքների (2014թ.-ի համեմատ 2015թ.-ին ընդլայնվել է համայնքների ցանկը՝ ընդգրկելով ՀՀ Տավուշի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Արարատի մարզի 31 համայնք) բնակիչների մասնագիտական կրթություն ստանալու նպատակով նրանց ընտանիքների սոցիալական բեռի որոշակի թեթևացման անհրաժեշտությունը հանձնարարվել է ՀՀ պետական բուհերի ռեկտորներին՝ 1-ին կուրսում սովորողների (տվյալ համայնքում հաշվառված և տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատություններն ավարտած) պարագայում՝ բուհերի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում, ուսման վարձերի մասնակի փոխհատուցման համար նախատեսված ժամկետներում, 2015/2016 ուստարվա 2-րդ կիսամյակում կիրառել ուսման տարեկան վարձի զեղչ առնվազն 10%-ի չափով, իսկ 1-ին կիսամյակում՝ ուսման վարձի գանձումները, ըստ անհրաժեշտության, կատարել ամսական կտրվածքով: Երկրորդ և բարձր կուրսերի ուսանողների պարագայում՝ բուհերի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում, ուսման վարձերի մասնակի փոխհատուցման համար նախատեսված ժամկետներում, 2015/2016 ուստարվա համար կիրառել տարեկան ուսման վարձի զեղչ առնվազն 20%-ի չափով:

5) Միջազգային չափանիշների համապատասխան 2011 թվականից մեկնարկել է ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացը: Հայաստանում Ամերիկյան համալսարանը, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը անցել են միջազգային հավատարմագրում: Հարկ է նշել, որ Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարան հիմնադրամը անցել է որակի միջազգային հավատարմագրում Ֆրանսիայի բարձրագույն կրթության և հետազոտության գնահատման (HCERES) և Իսպանիայի որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության /AERES/ կողմից:

ՀՀ 14 պետական և 4 մասնավոր բուհեր անցել են ինստիտուցիոնալ և պայմանագրային ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից:

6) 2014 թվականին նորարարական ծրագրերի իրականացման ուղղությամբ 10 բուհերին /ԵԳՊԱ, ՀԱԱՀ, ՀՊՃՀ, ԵՊԲՀ, ԵՊՀ, ԵՃՇԱՀ, ԳԱԱ, ՊԿԱ, ԵԹԿՊԻ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան/ տրվել են դրամաշնորհներ՝ մրցակցային հիմունքներով, որոնք ուղղված են բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը:

2015 թվականին մեկնարկել է «Կրթության բարելավում» նոր դրամաշնորհային մրցակցային ծրագիրը՝ ուղղված բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը:

7) Շարունակվում են ԵՄ-ի TEMPUS ծրագրի շրջանակներում ՀՀ բուհերի կողմից դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքները:

Erasmus+ ծրագրի կարողությունների զարգացման գործողության ներքո 2015 թվականի առաջարկների մրցույթի արդյունքներով (ՀՀ բուհերի ներգրավվածությամբ) հաղթել են ևս հինգ ծրագրեր, որոնցից մեկի համակարգողը հանդիսանում է Հայաստանի պետական կառավարման ակադեմիան:

8) Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվում է «Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի հզորացում՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» թվինինգ ծրագիրը:

Նախաձեռնությունը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից (ծրագրի բյուջեն 1,000,000 եվրո է, տևողությունը՝ 24 ամիս): Ծրագրի մեկնարկվել է 2014 թվականի հուլիսին:

Ծրագիրն իրականացնում է Ֆինլանդիայի կրթության գնահատման կենտրոնի (FINEEC), Գերմանիայի կրթության ու հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF) և ՀՀ կրթության և գիտության նախարարության համագործակցությամբ: Ծրագրում ընդգրկված են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ):

Ծրագրի շրջանակներում վերանայվել է ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը, մշակվել է բարձրագույն կրթության նոր օրենքի նախագիծ: Ընդլայնվել են ՄԿՈԱԱԿ-ի և բուհերի աշխատակիցների կարողությունները՝ Բոլոնիայի գործընթացի իրականացումն ու շարունակականությունն ապահովելու նպատակով, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՄԿՈԱԱԿ) լիիրավ անդամակցությանը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցացիային (ENQA) և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցմանը նպաստելու համար:

9) Եվրոպայի Միության և Եվրոպայի Խորհրդի Արևելյան համագործակցության երկրների համար 2015-2017թթ. Գործընկերության և համագործակցության շրջանակի ներքո, ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ մեկնարկել է «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» երկամյա ծրագիրը:

10) Շարունակվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից միջբուհական պայմանագրերով իրականացվող՝ ընդհանուր կրթական չափորոշիչների հիման վրա համատեղ ծրագրերի ընդլայնումը: ԵՄ աջակցությամբ բուհերում իրականացվում են ուսանողների փոխանակման և համատեղ կրթական ծրագրեր, ինչպես նաև կրթական ծրագրերի վերանայում՝ ըստ կրթական վերջնարդյունքների:

11) 2015 թվականի մայիսի 14-15 Երևանում տեղի է ունեցավ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի գործընթացի քաղաքականության 4-րդ ֆորումը:

Գագաթաժողովի ընթացքում ընդունվել է Երևանյան կոմունիկեն, որի հիմնական առանձնահատկություններն են բուհերի ուսանողների աշխատանքային իրավունքի խնդիրները և ուսանողական շարժունության ներառականությունը: Կոմունիկեում նշվում է նաև հակամարտող տարածքներում ապրող

ուսանողների և աշխատակազմի, անապահով ուսանողների և ուսուցչի շարժունությունն ապահովելու մասին:

12) Հետբուհական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու մասին որոշման նախագիծը, որի ընդունմամբ կկանոնակարգվի հետբուհական կրթության համադրելիությունը Բոլոնիայի պահանջներին և Զայցբուրգյան սկզբունքներին:

Համաձայն ներկայացված նախագծի ասպիրանտուրայի դիմորդները կատեստավորվեն այն օտար լեզվով, որն ընդգրկված է «Լեզվի իմացության համաեվրոպական (Common European Framework of Reference for Languages) համակարգ»-ում (այսուհետ՝ ԼԻՀՀ), ինչպես նաև դիմորդներն իրավունք կունենան իրենց ընտրությամբ հանձնել TOEFL տարբերակված ստուգաթղթ կամ IELTS՝ յուրաքանչյուր տարի ԿԳՆ-ի կողմից հաստատված ստորին անցումային միավորին համապատասխան:

13) **2015 թվականի նոյեմբերից մեկնարկել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման գործընթացը**, որի արդյունքների ամփոփումը և հաղթողների վերաբերյալ որոշումը՝ ըստ յոթ ոլորտների (բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (SՀS), բժշկություն, հումանիտար գիտություններ, հասարակագիտություն, ճարտարագիտություն (այդ թվում՝ ճարտարապետական /գյուղատնտեսական), մշակույթ-սպորտ, հայագիտություն) կկայացվի սույն թվականի դեկտեմբերին:

Հարկ է նշել, որ մրցույթի նպատակն է՝ բուհերի ուսանողների միջև խթանել մրցակցությունը, խրախուսել այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն, ունեն նշանակալի ձեռքբերումներ գիտահետազոտական, ստեղծագործական և սպորտի ոլորտներում, ինչպես նաև ակտիվ գործունեություն են ծավալում ուսանողական ինքնակառավարման, հասարակական կյանքի

ոլորտներից որևէ մեկում: Վերոնշյալ յոթ ոլորտներով՝ **ըստ կրթական ծրագրերի /բակալավր, մագիստրոս/, նախատեսված է 42 մրցանակային տեղ, որի համար նախատեսված է շուրջ 12 մլն դրամ խրախուսական գումար:**

14) **Շարունակվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպության» կարգավիճակ ունեցող ՀՀ պետական բուհերի «Հիմնադրամի» վերակազմակերպման հարցը: Ներկայումս 16 պետական բուհերից 5-ը ունեն «Հիմնադրամի» կարգավիճակ:**

15) ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների (նաև դասիչների) և որակավորումների համապատասխանեցման, ինչպես նաև մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը:

16) 2014 թվականի նոյեմբերին սկսվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման գործընթացի իրականացումը, որը կազմակերպվել է 2013 թվականի ազգային վարկանիշավորման գործընթացի փորձնական ներդրման արդյունքների հիման վրա: Նախատեսվում է ազգային վարկանիշավորման գործընթացի վերաբերյալ ամփոփ արդյունքերը ներկայացնել հանրությանը 2015 թվականի դեկտեմբեր ամսին: **Հիմք ընդունելով վարկանիշավորման համակարգի միջազգային փորձը 2015 թվականին փոփոխություններ են կատարվել վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունում, արդյունքում մշակվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների միասնական ցանկով վարկանիշավորման ազգային համակարգ:**

17) **Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից շարունակվում է իրականացվել սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100%-ի չափով:**

2015 թվականին Կրթության և գիտության նախարարությունը հանդես եկավ նախաձեռնությամբ համաձայն, որի ընդլայնվեց սոցիալապես անապահով ուսանողների շրջանակը՝ ընդգրկելով նաև առաջին կուրսեցիներին: Բակալավրի

և մագիստրոսի կրթական աստիճանում սովորող 719 առաջին կուրսեցիների պետության կողմից հատկացվել է ուսման վարձավճարի 50-100% չափով փոխհատուցում՝ որը կազմել է 496.710.220 դրամ: Հատկանշական է, որ 2014/2015 ուսումնական տարվա համեմատությամբ տեղի է ունեցել ուսման վարձի փոխհատուցման էական աճ, գումարային տեսքով, եթե 2014-2015 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում (2-րդից 4-րդ կուրս) փոխհատուցվել էր 1030 ուսանողի ուսման վարձը՝ 223.800.800 դրամի չափով, ապա **2015-2016 ուսումնական տարում, նույն կրթական աստիճանում ընդրկվել է 1379 ուսանող՝ 306.941.920 դրամ ուսման վարձի փոխհատուցման չափով:**

2014-2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցվել է 40 ուսանողի ուսման վարձը, **2015-2016 ուսումնական տարում փոխհատուցվել է 52 ուսանողների ուսման վարձը:**

18) **2015 թվականին շարունակցել է համագործակցությունը «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ:** Մասնավորապես ՀՀ ԿԳՆ-ն պատվիրել է իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն «ՀՀ ուսանողների կենսաոճի և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն» թեմայով: Սոցիոլոգիական հարցման արդյունքները ներկայացվել է սույն թվականի հոկտեմբեր ամսին:

ՄԱՐԶԱՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և ուսումը հանրակրթական ուսումնական հաստատություններում շարունակելու համար նախապատրաստվել են ՀՀ կառավարության որոշումներ:
2. Համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության հետ համատեղ շարունակվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական ինքնաձիգի և ուսումնական փամփուշտների տրամադրումը /շուրջ 700 հանրակրթական ուսումնական հաստատություններում

պատրաստվել է գենքի պահպանման սենյակներ, որոնք հագեցվել են անհրաժեշտ ուսումնական ավտոմատներով, նոնականետերով, ականներով, նոնակներով և զինամթերքով/:

3. Սահմանամերձ հանրակրթական ուսումնական հաստատությունների /մասնավորապես Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում/ ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարելավելու և դպրոց-ուղեկալ կապերն ամրապնդելու նպատակով, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ 2015թ. շարունակվել է դպրոց ուղեկալ համատեղ աշխատանքների իրականացման միջոցառումների ծրագիրը /18.04.2012թ. N 303-Ա/Բ, 02.05.2012թ N 40-Ա/:

4. Զինվորական ղեկավարների հետ, տարածքային զինկոմիսարիատներում, ս.թ. օգոստոսի 25-30-ը անցկացվել են եռօրյա ուսումնամեթոդական պարապմունքներ, որոնց ընթացքում ՀՀ ՊՆ, ՀՀ ԱԻ, ՀՀ Ոստիկանության, ՀՀ ԿԳՆ և հանրապետական զինկոմիսարիատի ներկայացուցիչների կողմից իրականացվել հրահանգավորման աշխատանքներ:

5. Մշակման փուլում է գտնվում «Ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի /ՆԶՊ ուսուցչի/ թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը» ՀՀ ԿԳՆ և ՀՀ ՊՆ համատեղ հրամանի նախագիծը, գրավոր և բանավոր փուլերի համար նախատեսված հարցաշարերը:

6. ՀՀ ՊՆ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ համատեղ ուժերով նախաձեռնվել է «Նախագորակոչային տարիքի երեխաների շրջանակներում ռազմահայրենասիրական, սոցիալական և ընդհանուր իրավական իրազեկության վերաբերյալ» ծրագրի իրականացում:

7. Շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ քննարկվել և սահմանվել են «Աղետներին՝ երկրաշարժի դիմակայացման ուղղված ուսուցման կազմակերպումը դպրոցներում» նախատեսվող միջոցառումների տեսլականը:

8. Ի կատարումն 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2015 թվականի միջոցառումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու

մասին» թիվ 1053-Ա ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ 2015թ. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բարձրագույն, նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում թմրամոլության կանխարգելման նպատակով իրականացվել են քարոզչական աշխատանքներ և միջոցառումներ դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների և վնասակար այլ նյութերի շրջանառության կանխարգելման նպատակով:

9. «Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության» ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բարձրագույն, նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթադաստիարակչական աշխատանքներ, մշակվել և ներկայացվել է «Տեղեկատվական ցուցումներ» աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

10. ՀՀ պաշտպանության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության համատեղ հրամանով հաստատված կարգի իրականացվել են «Տարվա լավագույն գինվորական ղեկավար», «Տարվա լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի մարզային, Երևան քաղաքի և հանրապետական փուլերը:

11. 2015թ. փետրվար ամսին ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության համատեղ կազմակերպվել է «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով գիտագործնական կոնֆերանս:

12. 2015 թվականին մշակվել և իրականացվել են ՀՀ կառավարության հրեյյանական միջոցառումների ծրագրերից բխող նկարչական, գեղարվեստական, մարզական, տեխնիկական և այլ ծրագրեր:

13. 2015 թվականին կատարելագործվել է արտադպրոցական ոլորտի նորմատիվ-իրավական դաշտը՝ մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի հունիսի 29-ի թիվ 629-Ն հրամանով հաստատված ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:

14. 2015 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 46 արձանագրային որոշմամբ հաստատված «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների» պետական ծրագրից բխող միջոցառումները:

15. 2015 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ արդեն հինգերորդ անգամ նախաձեռնել և իրականացրել է **«Մեկ դար և ավելի...» համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը: 2015թ. մրցույթ-փառատոնին մասնակցել է 6-18 տարեկան շուրջ 1000 երեխա Հայաստանի 97, Արցախի 5 և Սփյուռքի 13 երկրների (Ռուսաստան, Աբխազիա, Ուկրաինա, Ուզբեկստան, Ղազախստան, Վրաստան, Արգենտինա, Ուրուգվայ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իրաք, Իրան, Լիբանան) 36 դպրոցներից:** Ներկայացվել են նկարներ, գորելեններ, քանդակներ, և այլ օբյեկտներ: Մրցույթի առաջին փուլի արդյունքում ցուցահանդեսին ներկայացվել են Հայաստանի 40, Արցախի 3 և Սփյուռքի 32 դպրոցների շուրջ 250 նկարներ (առանձին նկարներ, նկարներ-նախագծեր, նկարների շարքեր, նկար-օբյեկտներ), 9 գորելեններ, 4 քանդակներ և 8 օբյեկտներ: Դեկտեմբերին նախատեսվում է մրցույթի II փուլը, որի արդյունքում կհայտարարվեն վերջնական հաղթողները: Լույս կտեսնի նաև ցուցահանդեսի աշխատանքների կատալոգ:

16. 2015 թվականին կազմակերպվել է հրաձգության, գնդակային հրաձգության, նետաձգության հանրապետական մրցումներ: 8 մարզիկներ մասնակցել են

հրաձգության, գնդակային հրաձգության և նետաձգության միջազգային մրցումների, գրավելով պատվավոր տեղեր.

Գնդակային հրաձգություն

- 2015թ. մարտի 2-ից մարտի 9-ը ՀՀ ԿԳՆ Հրաձգության հանրապետական մարզադպրոցի 2 սաներ մասնակցել են Հոլանդիայում Եվրոպայի երիտասարդական առաջնությանը և գրավել են 5-րդ (Զավեն Իգիթյանը ատրճանակ) 6-րդ և 12-րդ տեղերը (Ռազմիկ Մինասյանը շարժական թիրախ):
- Հուլիսի 15-ից 23-ը Սլովենիայում Եվրոպայի պատանիների առաջնությանը մարզադպրոցի սան Զավեն Իգիթյանը զբաղեցրել է 12-րդ տեղը:

Նետաձգություն

- Հուլիսի 24-ից օգոստոսի 2-ը Կոպենհագենում Աշխարհի առաջնության մեծահասակների մրցումներում մեր սաներից Արամայիս Ապրեսյանը գրավել են 33-րդ տեղը:
 - Հոկտեմբերի 14-18-ը Բաթումիում կայացած միջազգային մրցումներում, որտեղ մասնակցում էին 11 պետությունների 83 նեկայացուցիչներ, մեր սաներից 4-ը մասնակցել են, գրավել են 8-րդ, 9-րդ, 13-րդ և 17-րդ տեղեր, թիմային՝ 4-րդ տեղը:
 - Հոկտեմբերի 22-ից 26-ը «Հայկի նետ» միջազգային մրցումներին մասնակցել են 7 սաներ, որոնցից 2-րդ տեղ զբաղեցրել են Վիգեն Սմբատյանը և Հայկուհի Մարգարյանը, 4-րդ տեղ՝ Արամայիս Ապրեսյանը, 5-րդ՝ Ժորա Մովսեսյանը, 9-րդ՝ Մարիամ Մաթևոսյանը, Հրաչիկ Վարդանյանը, 14-րդ՝ Արման Ապրեսյանը:
17. 2015 թվական, Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկ քաղաքում ԱՊՀ երկրների դպրոցականների միջև միջազգային 3-րդ փառատոնի աղջիկների բասկետբոլի մարզաձև՝ 4-րդ տեղ :
18. Անդորա, Եվրոպայի մինչև 16 տարեկան աղջիկների բասկետբոլի առաջնություն, 2-րդ պատվավոր տեղ:
19. Վրաստան, Բաթումի քաղաք՝ աղջիկների լողափնյա վոլեյբոլի միջազգային մրցաշար, 2-րդ պատվավոր տեղ:
20. Սլովակիա, քաղաք Բռատիսլավ, Եվրոպայի պատանիների սեղանի թենիսի առաջնություն՝ ՀՀ ներկայացել է 3 մասնակցով:

21. ՀՀ ԿԳՆ Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոնի ներկայացուցիչները մասնակցելով այս տարի Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությանը շահել են՝ 1 ոսկե, 1 արծաթե մեդալներ, ինչպես նաև 1 գավաթ և ոչ պաշտոնական թիմային հաշվարկով գրավել չորրորդ տեղը:
22. ՀՀ կրթության և գիտության նախարարության 2015թ. մանկապատանեկան մարզադպրոցների միջև տեղի է ունեցել 1998-2002 թթ. ծնված պատանիների և աղջիկների հանրապետական առաջնություններ հանդբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս մարզաձևերում: Առաջնություններին մասնակցել են թվով 748 պատանիներ և աղջիկներ:
23. 2015 թվականին ՀՀ ՊՆ աջակցությամբ ՌԴ-ից ձեռք է բերվել թվով 60 հատ հրթիռային մոդելների շարժիչներ և 2016թ.-ի հունվարից տիեզերագիտական խմբակը ձեռնամուխ կլինի փորձարարական աշխատանքների, ղեկավարվող հրթիռային մոդելների պատրաստմանը: Աշխատանքներ են տարվում համապատասխան նախագծերի վերաբերյալ:
24. Կազմակերպվել է սենյակային թռչող «Գերթեթև» և «Ազատ թռչող» մոդելների գծով հանրապետական մրցումներ, որին մասնակցել են 74 դպրոցականներ, ինչպես նաև շուրջ 230 շահառուներ, ծնողներ, հրավիրվածներ, դպրոցականներ:
25. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ անց են կացվել **ՀՀ Անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ մարզական խաղերի մրցումներ**: Ծրագրում ընդգրկվել է 9 մարզաձևեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, ս/թենիս, աթլետիկա, ֆուտ-զալ, բադմինթոն և լողափնյա վոլեյբոլ: Հանրապետական մարզական խաղերի 4 փուլերին (համայնքային, մարզային, միջմարզային և հանրապետական եզրափակիչ) **մասնակից են դարձել շուրջ 62.772 դպրոցականներ**:
26. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ ՀՀ «Ազգային Ժողովի» գավաթի խաղարկության 2015թ. մրցումների անկացում: Մրցումները անց են կացվել չորս փուլերով, որին **մասնակցել են 1-6-րդ դասարանների աշակերտները, ընդհանուր թվով 160 000 դպրոցական**:

27. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի ՀՀ Կոտայքի մարզի, Մեղրաձոր գյուղի տարածքում կազմակերպվել և անց են կացվել տուրիստական հանրապետական խաղեր-մրցումներ, որին մասնակցել են թվով 220 դպրոցականներ:
28. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի ՀՀ Սյունիքի մարզում անց է կացվել հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված մանկապատանեկան փողային նվագախմբերի փառատոնը, որին մասնակցել են թվով 520 դպրոցականներ:
29. 2015թ. սեպտեմբերին ստեղծվել է երգի-պարի անսամբլ Լոռվա մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Գյուլագարակ գյուղում:
30. 2015թ. Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնում ստեղծվել է ժող. գործիքների անսամբլ:
31. 2015թ. սեպտեմբերին Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար 14 հատուկ դպրոցում ստեղծվել է հայ երգի դասարան:
32. 2015 թվականին Չեխիայի Հանրապետության Լիդիցե քաղաքում կերպարվեստի 43-րդ միջազգային ցուցահանդեսին մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սաները ներկայացրել են շուրջ 60 աշխատանք:
33. 2015 թվականին Բելառուսիայի Մինսկ քաղաքում «Մոլորակի երեխաները բարեկամներ» են միջազգային ցուցահանդեսին մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սաները ներկայացրել են շուրջ 110 աշխատանք:
34. Համաձայն ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների՝ կազմակերպվել և անց են կացվել Մուսա լեռան հերոսամարտերի 100-ամյակի և Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ:
35. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի **անց են կացվել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 16-րդ հանրապետական մարզական խաղերը:** Խաղերը կազմակերպվել է 10 մարզաձևից, 14 առաջնություն, որոնցից վոլեյբոլ, բասկետբոլ ֆուտզալ մարզաձևերում գարնանային և աշնանային մրցաշրջաններով:

Մասնակցել շուրջ 2000 ուսանող, 15 բարձրագույն ուսումնական հաստատություններից: Մրցումները աննախադեպ էին իրենց ծավալով, սկսվել են փետրվարին և ավարտվել դեկտեմբերին:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնային անվտանգության ծառայության սահմանային հսկողության և 102-րդ ռուսական ռազմական բազայի ծառայողների երեխաներին <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության վերաբերյալ>> համաձայնագրի շրջանակներում, ՀՀ բուհեր պետ. պատվերով ընդունելություն՝ /12/
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթության նախարարության միջև կրթության բնագավառում համաձայնագրի շրջանակներում ՝ /6/
- ՀՀ կրթության և գիտության նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՝ /2/
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարության միջև կրթության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին 2015-2020թթ. համար ստորագրված փոխանակման հուշագրի շրջանակներում ՝ /14/

- 2015-2016 ուսումնական տարում Հորդանանի համալսարանի լեզուների կենտրոնի արաբերեն լեզվի մեկամյա դասընթացներին մասնակցելու համար ընդունելություն՝ /20 ուսանող ԵՊՀ-ից/

ինչպես նաև

- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար 2015-2016 ուսումնական տարում գործուղվել է Հայաստանի Հանրապետության 32 քաղաքացի(ՉԺՀ 12, Բուլղարիա 4, Ռումինիա 6, Վրաստան 4, Լեհաստան 6):

- Միջպետական համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող ՀՀ քաղաքացիներին տրվել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման 500 տեղեկանք:

- ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդելու նպատակով հրավիրված 25 օտարերկրյա մասնագետներին և նրանց ընտանիքի անդամներին ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության միջոցով տրամադրվել է անվճար կացության կարգավիճակ:

- ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից օտարերկրյա ուսանողներին տրված տեղեկանքների, վկայագրերի և դիպլոմների իսկության վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ-ում օտարերկրյա դեսպանություններին:

- 2015թ. մայիսի 14-15-ին Երևանում կայացել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (Բոլոնիայի գործընթացի) հերթական նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի 4-րդ Քաղաքականության ֆորումը: Նախարարական գագաթաժողովին և ֆորումին մասնակցել են Բոլոնիայի գործընթացի անդամ 48 երկրների և մոտ 25 այլ երկրների պատվիրակություններ՝ կրթության նախարարների գլխավորությամբ, ինչպես նաև շուրջ 40 միջազգային կազմակերպությունների և

լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Միջոցառումը անցկացվել է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային Համալիրում:

• Տրվել է Երևանում չինարենի խորացված ուսուցմամբ դպրոցի շինարարական աշխատանքների մեկնարկը:

Կնքված համաձայնագրեր, Գործնական ծրագրեր, Փոխըմբռման Հուշագրեր

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին» /համաձայնագիր/
- «Երևան քաղաքում Մ.Վ. Լոմոնոսովի պետական համալսարանի մասնաճյուղի հիմնման և գործունեության պայմանների մասին» /համաձայնագիր/
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» /համաձայնագիր/
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման մասին» /համաձայնագիր/
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռեյալտիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻՆԿՐԱՆԵՏ) միջև Հայաստանի Հանրապետությունում ԻՆԿՐԱՆԵՏ-ի կենտրոն հիմնադրելու մասին» /համաձայնագիր/
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, գիտության և

կրթության ոլորտներում 2015-2018թթ. համագործակցության մասին» /գործնական ծրագիր/

- «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Սաքսոնիա-Անհալթ երկրամասի մշակույթի և կրթության նախարարության միջև կրթության և մշակույթի ոլորտներում հետագա համագործակցության մասին» /փոխըմբռնման հուշագիր/
- «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Արգենտինայի Հանրապետության դեսպանության միջև Երևանի ավագ դպրոցներում տանգոյի մրցաշար կազմակերպելու մասին» /փոխըմբռնման հուշագիր/
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի պետության կառավարության միջև կրթության և գիտության ոլորտներում համագործակցության մասին 2015-2019 թթ. համար» /գործնական ծրագիր/:

ՍՓՅՈՒՌԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

I. Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում

Հուլիսի 1-ից հուլիսի 29-ը Հայաստանում **իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում**: Հատկանշական է, որ ծրագրին մասնակցած ուսուցիչների թիվը զգալիորեն աճել է նախորդ երկու տարիների համեմատ:

Ծրագրին մասնակցել են 63 ուսուցիչներ 15 երկրներից.

Վերապատրաստումն իրականացվել է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից՝ 6 ուսումնական խմբերում: Բացի մանկապարտեզի, մեկօրյա և տարրական դպրոցների, լրացուցիչ կրթության խմբեր մանկվարժների համար՝ երկու տարվա

ընդմիջումից հետո գործել է նաև հայոց լեզվի խումբը, ինչպես նաև առաջին անգամ ձևավորվել հայոց պատմության առանձին խումբ:

II. Սփյուռքի համար մասնագիտական կադրերի պատրաստումը ՀՀ ուսումնական հաստատություններում

2015թ. «Սփյուռքի համար մանկավարժական և մասնագիտական կադրերի պատրաստումը համալսարաններում ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարություն են դիմել շուրջ 760 սփյուռքահայեր 22 երկրներից:

Նախապատրաստական բաժանմունք սփյուռքահայերի ընդունելությունը ավարտվելու է տարվա վերջում: Սակայն սիրիահայ դիմորդների համար հնարավորության դեպքում արվում են բացառություններ:

Անցյալ տարվա տվյալներով ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորել է շուրջ 4250 սփյուռքահայ ընդամենը 35 երկրներից, որից 2050-ը՝ պետական բուհերում, 767-ը՝ ոչ պետական բուհերում, 889-ը՝ միջազգային բուհերում և 520-ը՝ քոլեջներում: **Պետական պատվերով սովորում են 618 սփյուռքահայեր:** Սովորողների թիվը նախորդ տրվա համեմատ չի փոփոխվել: Այնինչ պետական պատվերով ուսանողների թիվը կրկնապատկվել է:

III. Քաղաքական պաստառի համահայկական փառատոն

2015թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ կազմակերպվել էր սոցիալական պաստառի և պատի թերթի դպրոցական փառատոն: Փառատոնի շրջանակներում նախատեսված է պաստառների և պատի թերթերի առցանց ցուցահանդես Facebook-ում, որը կբացվի մինչև տարվա վերջը:

IV. Աջակցություն հայագիտական կենտրոնների գործունեությանը

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է սրտասահմանյան երկրներում հայագիտական կենտրոններին աջակցություն: Ներկայումս ՀՀ պետական միջոցներով իրականացվում են կրթական ծրագրեր Ռումինիայի Բուխարեստի պետական համալսարանում, Չեխիայում Պրահայի պետական համալսարանում և Ավստրիայի Չալցբուրգի համալսարանում: Այս տարի առաջին անգամ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ստաձնել է Վենետիկի Կա-Ֆոսկայի անվան համալսարանի Հայագիտության ամբիոնը, Բուխարեստի պետական համալսարանի հետ

համաֆինանսավորմամբ ֆինանսավորվում է նաև Կլուժ-Նապոկայի Բաբեշ-Բոյա համալսարանում հայերենի դասընթացը: V. Հայագիտական համահայկական 7-րդ օլիմպիադա և հայ առաքելական եկեղեցու պատմության մրցույթ

2015թ. օգոստոսի 3-9-ը կազմակերպվել էր դպրոցականների համահայկական օլիմպիադա: Օլիմպիադային մասնակցել են շուրջ 100 մասնակիցներ՝ 9 երկրներից (Իսպանիա, Իրան, Ռուսաստան, Սիրիա, Վրաստան, Էստոնիա, Ֆարնսիա, ԼՂՀ, Հայաստան): Երեխաները մրցել են հայոց լեզվի, գրականության, պատմության, մշակույթի, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու պատմության վերաբերյալ գիտելիքի ոլորտներում: Հաղթողները ստացել են դիպլոմներ, մրցանակներ, ՀՀ ԿԳՆ պատվոգրեր և շնորհակալագրեր:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. հունվարի 12-ից մինչև դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության և շահագրգիռ նախարարությունների քննարկմանն է ներկայացվել թվով 13 ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որից ընդունվել է թվով 8-ը, այդ թվում՝

ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 18-ի N941-Ն որոշման համաձայն՝ «Ջերմուկի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է «Ջերմուկի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը,

ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 29-ի N 1260-Ն որոշման համաձայն՝ «Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին,

ՀՀ կառավարության 2015 թ. նոյեմբերի 19-ի N 1354-Ն և 2015թ. և N 1355-Ն որոշումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N 17 հիմնական դպրոց» և «Գյումրու N 44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միացման ձևով վերակազմակերպվել և միացել են

համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու ակադեմիական վարժարան» և «Գյումրու N 45 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 3-ի N 1418-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու մշակույթի վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել է և միացել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Թվով 3 որոշում ընդունվել է տարածքների հանձնման-ընդունման, նվիրատվության և անհատույց օգտագործման մասին:

Թվով երկու որոշման նախագիծ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը, իսկ երկու որոշման նախագիծ՝ համապատասխան գերատեսչական մարմիններին:

ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 27-ի N1408-Ն և N1407-Ն որոշումների համաձայն՝ իրականացվել է «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը:

Հաստատվել են Երևան քաղաքում չինարենի խորացված դպրոցի կառուցման նախնական նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Վերահսկողություն է իրականացվել նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի նպատակային օգտագործման, վարձակալությամբ տրվող տարածքների և սեփականության իրավունքով տրված գույքի դուրսգրման և օտարման աշխատանքների նկատմամբ:

2015 թվականի ընթացքում սկսվել են «Ապարանի ռազմամարզական վարժարան» և «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ների հիմնանորոգման աշխատանքները. Այդ թվում՝

36000.0 հազ. դրամ՝ «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի էլեկտրամոնտաժային, ջեռուցման,

սանհանգույցների, տանիքի, խաղահրապարակի վերանորոգման և արտաքին գազաֆիկացման աշխատանքների իրականացում,
29,931.1 հազ. դրամ՝ «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության տնտեսված գումարների հաշվին իրականացվել են 4 ավագ և Երևանի N 16 հատուկ դպրոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և դրանց փորձաքննության աշխատանքները:

Վարկային ծրագրերի շրջանակներում ուսումնասիրված և ընտրված անհետաձգելի հիմնանորոգման կարիք ունեցող թվով 20 ավագ դպրոցներից 5-ի համար մշակվել են հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը և նոր աշակերտական գույքի կարիք ունեցող ավագ դպրոցներին տրամադրվել նոր գույք:

Կազմել և ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի հիմնանորոգման բյուջետային հայտը և ՀՀ 2016-2018 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Ընդհանուր բաժնի կողմից 2015թ հունվարի 12-ից մինչև դեկտեմբերի 11-ը ընկած ժամանակահատվածում մուտքագրվել է 23384 գրություն և 4263 դիմում: Նախարարի և աշխատակազմի ղեկավարի կողմից տրվել է 1100 հրաման:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության կողմից 2015 թվականի ընթացքում իրականացվել է նախահարցական, տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթաց: Ներկայացված հայտերի հիման վրա կատարվել է փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում, որի արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարի

հրամաններով լիցենզիա են ստացել նախադպրոցական կրթական ծրագրով՝ 59, տարրական հանրակրթական ծրագրով՝ 5, հիմնական հանրակրթական ծրագրով՝ 5, միջնակարգ հանրակրթական ծրագրով՝ 5 ուսումնական հաստատություններ:

Իրականացվել են՝

- նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով մասնագիտությունների գործունեության թույլտվության 15 հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում,
- միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնագիտությունների գործունեության թույլտվության 19 հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում,
- բակալավրի կրթական ծրագրերով 1 լիցենզիայի, մասնագիտությունների գործունեության թույլտվության 7 հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում,
- մագիստրոսի կրթական ծրագրերով 1 լիցենզիայի, մասնագիտությունների գործունեության թույլտվության 3 հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում,
- դիմումի համաձայն՝ պետական և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով լիցենզիաների կասեցման և դադարեցման 11 հրամանների նախագծերի պատրաստում,
- թվով 16 բարձրագույն ուսումնական հաստատությունների << կրթության և գիտության նախարարի հրամանով տրված ընդունելության սահմանային տեղերի փոփոխության հրամանների նախագծերի պատրաստում:

Վերաձևակերպվել են ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով թվով 24 լիցենզիաներ և այդ հիմքով իրականացվել են 24 եզրակացությունների, հրամանների նախագծերի պատրաստում:

Պատասխանվել է թվով 296 գրությունների:

իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզիաներով տրված մասնագիտությունների համապատասխանեցում ՀՀ կառավարության 2014 թվականի N 1191-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկին:

Նախատեսվում է համապատասխանեցման գործընթաց իրականացնել նաև նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մասով՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1139-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի համաձայն:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով 2015թ. լիցենզավորման գործակալության կողմից բժշկական մասնագիտությունների գծով գործունեություն իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացված լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով ուսումնասիրությունների արդյունքներով՝ 4 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության լիցենզիաների գործողությունները կասեցվել են և 4 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններ նախազգուշացվել են, բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձրագույն մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով գործունեության 5 լիցենզիաների գործողություն դադարեցվել են, 7 ուսումնական հաստատություններ նախազգուշացվել են:

Լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով ուսումնասիրություններ է իրականացվել 6 նախադպրոցական կրթական ծրագրով գործող ուսումնական հաստատություններում: Ուսումնասիրություններ է իրականացվել 2 բողոքների հետքերով:

Իրականացվել է պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների տարբեր կրթական ծրագրերով գործունեությանն առնչվող, օրենքով նախատեսված ամենամյա շուրջ 1000 հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն: Թարմացվել են նախնական /արհեստագործական/, միջին, բարձրագույն

մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղեկատվական բազաները:

Գործակալության կողմից կարծիքներ է տրվել 16 գերատեսչությունների օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ:

Իրականացվել են կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի թվով 10 նիստերի նախապատրաստական աշխատանքներ. նիստերի օրակարգի, քվեաթերթիկների, արձանագրությունների, եզրակացությունների և հրամանների նախագծերի և մամուլում հայտարարություններ տպագրելու պատրաստում:

ՀՀ արդարադատության նախարարություն ուղարկվել է թվով 10 գրություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական հաստատություններին լիցենզիա տալու վերաբերյալ, սահմանված կարգով գերատեսչական նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրերում հրապարակելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության 2015 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ոչ հարկային եկամուտների բյուջետային մուտքերի վերաբերյալ տեղեկանքներ, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կրթական ծրագրերով տրված լիցենզիաների և գործող լիցենզիաների հետ կապված փոփոխությունների մասին տեղեկատվություն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Գործում է նախարարության պաշտոնական կայքի բլոգը՝ <http://armeniaedu.blogspot.com/>:
2. Լուսաբանվել են ԿԳ նախարարի այցերը ՀՀ մարզեր /հեռուստատեսություն, կայքեր, ռադիո/:
3. «Голос Армении» թերթի «За партой» խորագրի շրջանակում 2014 թվականին հրապարակվել է 12 նյութ:

4. Մամուլում կրթական թեմաներով հրապարակվել է 558 նյութ:
5. Նախարարության պաշտոնական կայքում զետեղվել են նախարարության գործունեությանն առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող շուրջ 160 հայտարարություն, 380 լրատվական նյութ:
6. Կազմակերպվել է ԿԳ նախարարի և նախարարի տեղակալների, վարչության պետերի 20 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են հանրապետական հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական մամուլում:
7. Հանրային քննարկման է դրվել 3 իրավական ակտի նախագիծ:
8. Կազմակերպվել է ավելի քան 100 հանրային միջոցառում, որոնք լուսաբանվել են հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական, էլեկտրոնային և տպագիր մամուլում,
9. **Նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ընդունվել է 96 ահազանգ, որից 57-ը՝ Երևանից, 39-ը՝ մարզերից: Բոլոր ահազանգերը համապատասխան ընթացք են ստացել ինչպես նախարարության հանրակրթության վարչության, այնպես էլ կրթության պետական տեսչության կողմից:**
10. Պատասխան է տրվել քաղաքացիների կողմից էլեկտրոնային փոստով ստացված ավելի քան 200 նամակի:
11. ԿԳ նախարարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների 7 ընդունելություն, որոնց ընթացքում նախարարն ընդունել է 62 քաղաքացու:
13. Նախարարության ինֆոկենտրոնը սպասարկել է նախարարություն այցելած ավելի քան 21000 քաղաքացու:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Դատական մարմիններում նախարարության շահերի ներկայացում և պետական շահերի պաշտպանություն՝ /8 դատական գործ/:
2. Կրթության և գիտության ոլորտը կարգավորող՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին նախագծերի փաթեթների, ենթաօրենսդրական ակտերի մշակում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության ծրագրի միջոցառումների ցանկով նախատեսված իրավական ակտերի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում: Տարբեր գերատեսչություններից ստացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների, ՀՀ ԿԳ նախարարի նորմատիվ հրամանների նախագծերի վերաբերյալ կարծիքների, մասնագիտական եզրակացության տրամադրում և այլն:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ ՀՀ կառավարության անհատական որոշման նախագծերի մշակում և սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարություն /«Լույս» հիմնադրամի կրթաթոշակառուներին տարկետման տրամադրում /7 քաղաքացիներ/, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1394-Ն որոշման հիման վրա Պարտավորությունների կատարումն ապահովող գրավի պայմանագրերի կնքում /1 քաղաքացի/, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի /10 քաղաքացի/:
4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողներին՝ /հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած, զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած կամ զոհված (մահացած) զինծառայողների երեխա/ արտոնություններից օգտվելու համար եզրակացության տրամադրում /110 ուսանող/:
5. Պատասխանվել է քաղաքացիներից ստացված տարբեր բնույթի և բովանդակության դիմումների:
6. Իրավական օգնություն և համագործակցություն կրթության և գիտության ոլորտին վերաբերող միջազգային, միջպետական պայմանագրերի և փոխըմբռնման հուշագրերի մշակման և կնքման աշխատանքներին:

7. Նախարարության աշխատակազմում կնքվող պայմանագրերի նախագծերին փորձագիտական եզրակացության տրամադրում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ սահմանվել են կրթության զարգացման նպատակները, գերակայությունները և գործողությունների շրջանակը:

1. Մշակվել և կազմվել են կրթության ոլորտի ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի նախագծերը:
2. Հավաքագրվել և մշակվել են հանրակրթության, մասնագիտական կրթության և կրթության ֆինանսավորման 2013-2014 ուսումնական տարվա վիճակագրական ցուցանիշները, որոնք ժամանակին ներկայացվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտ:
3. Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված «Եվրոպական կրեդիտային համակարգի ներդրումը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում» TAİEX ծրագրի շրջանակներում 2015 թվականին կազմակերպվել է աշխատաժողով՝ ԵՄ փորձագետների մասնակցությամբ:
4. **Վարչությունը համակարգել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացման աշխատանքները: 2015 թվականին ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է դպրոցական նախաճաշ՝ յուրաքանչյուր երեխային օրական 140 դրամ հաշվարկով: Ծրագրում ընդգրկված են 22056 աշակերտներ, որից 2386-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, 6052-ը՝ ՀՀ Սյունիքի մարզ, 13618-ը՝ ՀՀ Արարատի մարզ:**
2016 թվականին Պարենի Համաշխարհային Ծրագրի և Երեխաների սնուցման համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում նախատեսվում է կազմակերպել Երեխաների սնուցման 18-րդ ամենամյա համաշխարհային ֆորումը, որը կնպաստի մեր համագործակցության

խորացմանն ու սերտացմանը, ինչպես նաև «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի հետագա ընդլայմանն ու զարգացմանը:

5. Կազմակերպվել են կրթության ոլորտում իրականացվող պետական ռազմավարական ծրագրերի մշակման և մոնիթորինգի աշխատանքները, մասնավորապես՝
 - 1) ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր,
 - 2) ՀՀ կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր և գերակա խնդիրներ,
 - 3) կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թվականների միջոցառումների համալիր ծրագիր,
 - 4) ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի կազմում և կրթության ոլորտի գերակա խնդիրների սահմանում,
 - 5) ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի կրթության ոլորտի 2015թ. միջոցառումների ծրագիր,
 - 6) ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագիր,
 - 7) Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2015թ. տարեկան ծրագրի կրթության ոլորտի միջոցառումներ,
 - 8) ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության իրականացումն ապահովող կրթության ոլորտի 2015թ. միջոցառումներ,
 - 9) գենդերային քաղաքականության 2011-2015թթ. կրթության ոլորտի միջոցառումների ծրագիր:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող աշխատանքներ

1/ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության

պաշտոնների անձնագրերում փոփոխությունների կատարում, պաշտոնի անձնագրերի կազմում:

2/ Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և համակարգում՝ թվով 78 հոգի.

3/ Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների ատեստավորման կազմակերպում և համակարգում՝ թվով 48 հոգի.

4/ Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների մրցույթներ՝ թվով մոտ 20 մրցույթ.

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգերը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 224-Ն որոշումից բխող աշխատանքներ՝

Նախարարության համակարգում ընդգրկված ՊՈԱԿ-ների (բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների (ռեկտորների և տնօրենների) թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում և անցկացում՝ թվով 18 տնօրենի մրցույթ.

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշումից բխող աշխատանքներ՝

Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ քննությանը մասնակցելու համար 2015թ. դիմել են 708 հավակնորդ, շնորհվել է հավաստագիր 553-ին, չեն հաղթահարել 91-ը:

4. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ քննությանը մասնակցել են 66 հավակնորդ, որից 55-ին շնորհվել է հավաստագիր, իսկ 6-ը չեն հաղթահարել:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1412-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ մանկավարժական կադրեր գործուղելու կարգի» համաձայն գործուղվել են 16 ուսուցիչ:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչությունը ապահովել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված թվով 74 ծրագրերի գծով ֆինանսական գործառույթների իրականացումը, որոնք իրենց մեջ ներառում են՝ տարեկան ժամանակացույցերի կազմում, մուտքագրում և հաստատում, համապատասխան պայմանագրերի կնքում ոչ գնման մասով, քաղվածք-պայմանագրերի կազմում և էլեկտրոնային առաքում բոլոր պայմանագրերի մասով, ամենամյա հայտերի, հավաստագրերի և ֆինանսական պարտավորությունների կազմում և էլեկտրոնային առաքում:

Օրենքով սահմանված կարգով շուրջ 400 կազմակերպությունների հետ /այդ թվում՝ ենթակա 258/ կնքվել են պայմանագրեր, պատշաճ ձևով և ժամանակին ապահովելով նրանց ֆինանսավորումը, ֆինանսավորվող կազմակերպություններից ընդունվել, ամփոփվել և սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել եռամսյակային հաշվետվություններ: Համապատասխան իրավական ակտերի առկայության դեպքում իրականացվել են ներհանրապետական և արտասահմանյան գործուղումների ծախսերի հաշվարկներ և վճարումներ:

Իրականացվել է սոցիալական փաթեթի սպասարկման աշխատանքների վերահսկում, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության կազմակերպություններից հաշվետվությունների ընդունում և ամփոփում, նախարարության աշխատակազմի էլեկտրոնային շտեմարանների բազայի ձևավորում, հաշվապահական ձևակերպումներ և գլխավոր գրքի լրացում:

հրականացվել է նախարարության հաշվապահական հաշվառումը, այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների բաշխման փաստաթղթերի կազմումը և հաշվառումը:

Վարչությունը մշակել և ՀՀ կառավարություն հաստատման է ներկայացրել թվով 10 ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որոնցից 9-ը հաստատվել են:

Նախարարության ենթակա կազմակերպություններից ընդունվել, ստուգվել և հաստատվել են շուրջ 171 նախահաշիվ, 115 տարիֆիկացիոն ցուցակ և 170 հաստիքացուցակ:

2015 թվականի ընթացքում զարգացման ծրագրերի և մոնիտորինգի վարչության հետ համատեղ մշակել, ամփոփել և ներկայացրել է քննարկման ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը: Կազմվել և մշակվել է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագիծը և սահմանված ժամկետում ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Կատարվել են ուսումնասիրություններ հանրապետության թերբեռնված դպրոցների ֆինանսական վիճակի մասին:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսվել և իրականացվել է 45 աուդիտի ենթակա միավորներում համակարգի գնահատման աուդիտ, որից 4-ը՝ բուհերում, 17-ը՝ քոլեջներում և ուսումնարաններում, 23-ը՝ դպրոցներում և հատուկ դպրոցներում և այլ հաստատություններում, դրանցից 20 միավորները Երևանում, իսկ 25-ը՝ մարզերում:

Աուդիտի արդյունքներով վեր հանված թերացումների և բացթողումների պատճառով ՀՀ ԿԳ նախարարի հրամանով տրվել է 4 խիստ նկատողություն, 9 նկատողություն, մնացած աուդիտի ենթակա միավորների ղեկավարներին տրվել են զգուշացումներ, ձեռնարկվել են համապատասխան քայլեր արձանագրված թերացումները և բացթողումները շտկելու և բացառելու ուղղությամբ: Արդյունքում արձանագրվել է շտկումների և բացթողումների վերացման բարձր կատարողական:

ԼՐԱՏՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2015 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը», ինչպես նաև «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը»:

Ոլորտը կարգավորող նշված կարգերն ընդունվել են՝ հաշվի առնելով միջազգային փորձը և վերջին տարիներին կատարված աշխատաշուկայի ուսումնասիրությունները: **Հիմնվում է նոր համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատել և ճանաչել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները՝ անձին տալով հնարավորություն պետության կողմից ճանաչելու իր գիտելիքները և կարողությունները, որը նա ձեռք է բերել կրթության տարբեր ձևերով (լրացուցիչ կրթության կամ ինֆորմալ ուսումնառության միջոցով):**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մրցութային կարգով ընտրվել է համակարգող կազմակերպություն՝ Ուսուցման ազգային հիմնադրամը, որի խնդիրը ուսուցման ազգային ռեեստրի ստեղծումն է, ինչպես նաև հստակ չափանիշների մշակումը՝ լրացուցիչ կրթություն ապահովող կազմակերպությունների և ուսուցման արդյունքների գնահատման ու ճանաչման գործընթացի համար:

Վերոնշյալ կարգերից բխող ենթաօրենսդրական ակտերը գտնվում են մշակման փուլում:

Լրացուցիչ և շարունակական կրթության գաղափարախոսության տարածման և առկա քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացման նպատակով մշակվել է ուսումնական ձեռնարկ, ձևավորվել վերապատրաստողների թիմ, որը ուսումնական ձեռնարկի հիման վրա 2015 թվականի ընթացքում դասընթացներ է իրականացրել՝ ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի 12 միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, տարածքային զբաղվածության գործակալության ներկայացուցիչների և գործատուների մասնակցությամբ:

2015 թվականի ընթացքում լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կողմից շարունակվել են լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների համակարգման, բժիշկների և միջին բուժաշխատողների՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետական պատվերի շրջանակում վերապատրաստում անցնելու կազմակերպման աշխատանքները:

ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

1.«Պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների /բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, հանրակրթական/ ավարտական փաստաթղթերի հայտերի հավաքագրում, հիմքերի ստուգում, ձևաթերթիկների և գերազանցության մեդալների տրամադրում» գործառույթի շրջանակներում իրականացվել է ՀՀ և ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի հայտերի հավաքագրում և բաշխում.

1.1 Հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվել է շուրջ 17470 հիմնական կրթության վկայական, 27850 միջնակարգ կրթության ատեստատ և 73 ոսկե մեդալ՝ գերազանց առաջադիմության համար:

1.2 Նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուս. հաստատություններին հատկացվել է 3250 նախնական մասնագիտական կրթության դիպլոմ:

1.3 Միջին մասնագիտական կրթության ուս. հաստատություններին հատկացվել է 8500 դիպլոմ:

1.4 Բարձրագույն ուսումնական հաստատություններին հատկացվել է 29600 դիպլոմ:

2. «Բարձրագույն, միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական, հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների կորցրած և խոտանված ավարտական փաստաթղթերի արխիվային հիմքերի ստուգում, կրկնօրինակների տրամադրում, ավարտական փաստաթղթերի իսկության հաստատում» գործառույթի շրջանակներում ստուգվել են 2300-ից ավելի ավարտական փաստաթղթերի գործերի հիմքեր, որոնցից մի մասին տրամադրվել

են կրկնօրինակներ: Տրամադրվել են ավարտական փաստաթղթերի իսկության վերաբերյալ տեղեկանքներ և գրություններ:

3. «ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, վարչապետի աշխատակազմեր ներկայացվող պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի փաթեթի պատրաստում: ԿԳ Նախարարության պարգևների /հուշամեդալ, պատվոգիր, շնորհակալագիր/ հրամանների պատրաստում և տրամադրում» գործառույթի շրջանակներում ՀՀ նախագահի, կառավարության և Ազգային ժողովի աշխատակազմ է ներկայացվել պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի 53 անձնական գործի փաթեթ: Պատրաստվել է 90-ից ավելի հրամանի նախագիծ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով», պատվոգրով և շնորհակալագրով պարգևատրելու մասին:

4. «Հանրակրթական և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների դասամատյանների, գովասանագրերի և լիցենզիաների բաշխում: Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրերի տրամադրում» գործառույթի շրջանակներում ուսումնական հաստատություններին տրամադրվել է շուրջ 21132 դասամատյան, բաշխվել է 38500 գովասանագիր, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ղեկավարման իրավունքի հավաստագիր են ստացել 510 ուսուցիչ և նախնական մասնագիտական կրթության տնօրենի 55 անձ:

5. «Ուսումնական հաստատություններից ստացված ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման հաշվետվությունների ստուգում և արխիվացում» գործառույթի շրջանակներում իրականացվում են հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններից ստացված ավարտական փաստաթղթերի բաշխման վերաբերյալ հաշվետվությունների ստուգման և արխիվացման աշխատանքներ:

Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգի students.armedu.am էլեկտրոնային էջում շրջանավարտների վերաբերյալ տվյալների տեղեկատվությունը շարունակական մուտքագրման ընթացքում է:

ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու, հայերենի կիրառությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.2-189.6-րդ հոդվածներով նախատեսված՝ իրավախախտումները բացահայտելու, (հայտնաբերելու) նպատակով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ է հարուցել 39 կազմակերպություններում:

Սահմանված կարգով և ժամկետներում տեսչությունը պատասխանել է քաղաքացիների, կազմակերպությունների բանավոր լեզվական շուրջ 780 հարցումների և գրավոր 249 դիմումի:

Դիմումներ են ներկայացվել տարբեր նախարարություններից, դատական տարբեր մարմիններից, պետական այլ կառույցներից, տնտեսավարող սուբյեկտներից, այլևայլ կազմակերպություններից, անհատ քաղաքացիներից: Տեսչությունը պատասխանել է լեզվական հարցումներ պարունակող հարյուրավոր հեռախոսազանգերի: Հարցումներ են ստացվել ՀՀ իշխանության բարձրագույն մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գիտության, կրթության, տնտեսության ամենաբազմազան ոլորտներից, անհատ քաղաքացիներից: Տեսչության աշխատակիցներն արձագանքել են լեզվական խնդիրներին վերաբերող հրապարակումներին, մասնակցել են հաղորդումների, հարցազրույցների, հանդես են եկել հոդվածներով, լուսաբանել տեսչության գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Լեզվի տեսչությունը հետևել է հեռուստատեղիների լեզվական մակարդակին, լեզվական ուսումնասիրության է ենթարկել տարբեր ՋԼՄ-ների գրավոր և եթերային արտադրանքը, ներկայացրել հոդվածներ, ամփոփագրեր: Մայրաքաղաքի ճարտարապետական շինությունների լեզվական ձևավորման, հրապարակային գրվածքների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու նպատակով շրջայցեր են կազմակերպվել և գույքագրում է կատարվել Երևանի Կասյան, Սարյան, Հրաչյա Քոչար, Սայաթ-Նովա փողոցներում, Կոմիտասի և

Մարշալ Բաղրամյան պողոտաներում լուսանկարվել են խախտումով ցուցանակները և հետագա աշխատանքներն իրականացնելու նպատակով կազմվել է շտեմարան: Տեսչությունում խմբագրվել է լեզվական վերահսկողության բաժնում կազմվող «Փոխառությունների բառարանը», ստեղծվել են նոր բառահոդվածներ:

Խմբագրվել և սրբագրվել է «ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը», ինչպես նաև դիտողություններ և առաջարկություններ են ներկայացվել ՀՀ Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումների նախագծերի վերաբերյալ:

Լեզվական քննության են ենթարկել հանրակրթական դպրոցների 7-րդ դասարանի «Աշխարհագրություն», 5-րդ դասարանի «Հայոց եկեղեցու պատմություն», 6-րդ դասարանի «Աշխարհագրություն», 11-րդ դասարանի «Հայ եկեղեցու պատմություն», 8-րդ դասարանի «Նախնական զինվորական պատրաստություն», 4-րդ և 6-րդ դասարանների «Մայրենի», 6-րդ դասարանի «Երկրաչափություն», 9-րդ դասարանի «Հայոց լեզու» և «Զարմանահրաշ նանոաշխարհ» դասագրքերը:

Տեսչությունը մասնակցել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի շրջանակում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համաձայն՝ 4-րդ շրջանի զեկույցի պատրաստման նպատակով ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծված հանձնախմբի աշխատանքներին, ինչպես նաև «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրներ» թեմայով համաժողովին և «Արդի հայերենի հիմնախնդիրներ» վերտառությամբ միջազգային գիտաժողովին: Տեսչության աշխատակիցները որպես ներկայացուցիչներ՝ դատարանում մասնակցել են վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի քննությանը, յուրաքանչյուր գործով ներկայացրել հայցի առարկան, հիմքը, կիրառելի օրենսդրությունը, հիմնավորել և պաշտպանել ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության իրավական դիրքորոշումը:

Համաձայն ՀՀ կառավարության 30.07.2015թ. N839-Ա որոշման՝ 2015 թվականի հուլիս ամսից կասեցվել են ստուգումներն ու վարչական վարույթները: Տեսչական բարեփոխումների խորհրդին սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված

հայերենի կիրառությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման ստուգաթերթերը, ինչպես նաև ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը չեն հաստատվել:

Լեզվի պետական տեսչության լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության, Հայաստանի Հանրապետության լեզվական վերահսկողության և Հայաստանի Հանրապետության լեզվի պետական տեսչության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, միաժամանակ առաջարկվել է «Լեզվի մասին» ՀՀ օրենքը լրացնել նոր՝ 6-րդ հոդվածով, որով Հայերենի բարձրագույն խորհրդին կտրվի բարձր կարգավիճակ: Պատրաստվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Հայերենի բարձրագույն խորհրդի կանոնադրությունը: Լեզվի պետական տեսչության կարգավիճակի փոփոխությանն առնչվող քայլեր են ձեռնարկվել. մասնավորապես, մշակվել և կազմվել են Լեզվի պետական կոմիտեի կանոնադրությունը և կառուցվածքը, որոնք առաջիկայում պետք է քննարկվեն ՀՀ կառավարությունում:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

2015թ. հունվար ամսին վերահաստատվել է ԲՈՀ-ի՝ թվով 56 մասնագիտական խորհուրդների ցանցը: Ընթացիկ տարում բուհերում և գիտական կազմակերպություններում գործող մասնագիտական խորհուրդներից ատենախոսությունների պաշտպանություններից հետո մուտքագրվել է 443 գիտական աստիճանի որակավորման գործ, իսկ պետական չափանիշներին ատենախոսությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով

ուսումնասիրվել է /նաև տրվել փորձաքննության/ շուրջ 600 որակավորման գործ /2014թ. դեկտեմբերին մուտքագրվել էր 100-ից ավելի/: Հանձնվել է 590 գիտական աստիճանի վկայագիր /38 դոկտոր և 542 թեկնածու/:

Բեկանվել կամ կրկնական քննարկման է ուղարկվել 70 աշխատանք /9 դոկտոր և 61 թեկնածու/՝ արտագրության հայտնաբերման և բացասական կարծիքների հիմնավորմամբ:

Բուհերից և գիտական կազմակերպություններից մուտքագրվել է գիտական կոչման 263 որակավորման գործ, ուսումնասիրվել է, հաստատվել և հանձնվել է 287 գիտական կոչման դիպլոմ /62 պրոֆեսոր և 225 դոցենտ/:

Մուտքագրվել և ուսումնասիրվել է (նաև տրվել փորձաքննության) օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման 24 գործ: Հանձնվել է 30 համապատասխանեցման հավաստագիր /3 դոկտոր և 27 թեկնածու/:

Գործածության մեջ են դրվել ԲՈՀ-ի կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակները:

Արխիվացվել են 2002-2004 թթ. գիտական աստիճանների և 2005-2008թթ. գիտական կոչումների որակավորման գործերը: Ներկայումս կարվում են 2005-2009թթ. գիտական աստիճանների գործերը:

ՀՀ պետական բյուջեից համակարգին հատկացված միջոցների սահմաններում կատարվել է մասնագիտական խորհուրդների ֆինանսավորումը կայացած պաշտպանությունների համար, նաև հնարավորության սահմաններում տրվել են կանխավճարներ մինչև 2016թ. նախատեսվող պաշտպանությունների համար: Ըստ կարգի՝ կատարվել է նաև փորձագետների ֆինանսավորումը:

Ազգային գրադարանի հետ կնքվել է պայմանագիր 1993 թվականից առ այսօր ԲՈՀ-ի հետ համատեղ ատենախոսությունների թվայնացման գործընթացը սկսելու և ավարտին հասցնելու նպատակով: Ընթացիկ տարում թվայնացվել է՝ Տնտեսագիտության բնագավառը՝ 945 աշխատանք, մանկավարժության բնագավառը՝ 248 աշխատանք և իրավաբանության բնագավառը՝ 202 աշխատանք: Ազգային գրադարանի հետ կնքվել է նոր պայմանագիր 2016թ. աշխատանքները շարունակելու համար:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ավագ դպրոցների սովորողների հաճախումների նկատմամբ վերահսկողություն (մշտադիտարկում)

Մշտադիտարկման արդյունքները 15-օրյա պարբերականությամբ ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին:

2. Դիտարկումներ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի «Նանեյի Ժպիտ», Երևան քաղաքի թվով 16 ոչ պետական մանկապարտեզներում և թվով 35 հիմնական դպրոցներում (հունվարի 26-ից փետրվարի 12-ը):

3. Ստուգումներ ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 26 ուսումնական հաստատություններում (փետրվարի 9-ից 16-ը, մարտի 2-ից 27-ը): Ստուգումների արդյունքում 26 ուսումնական հաստատություններից 17-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 17 ակտ:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

- 1) Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում՝ 7 դպրոց:
- 2) Ուսուցիչն ընդունվել է առանց մրցույթի՝ 8 դպրոց:
- 3) Ուսումնական պլանի պահանջներ՝ 12 դպրոց:
- 4) Սովորողի ընդունելություն, տեղափոխություն, ազատում՝ 3 դպրոց:
- 5) Սովորողների համակազմի ձևավորում՝ 1 դպրոց:
- 6) Օլիմպիադայի դպրոցական փուլի ընթացակարգ՝ 1 դպրոց:
- 7) Ներքին գնահատում՝ 3 դպրոց:
- 8) Լիցենզիայի առկայություն՝ 5 դպրոց:
- 9) Լիցենզիայի պահանջներ՝ 2 դպրոց:
- 10) Կառավարման խորհրդի գործունեություն՝ 4 դպրոց: Դիտարկումներ Երևան քաղաքի թվով 6 միջնակարգ դպրոցներում (մարտի 11-ից 16-ը):

4. Դիտարկումներ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և

երիտասարդության հարցերի բաժնում և համայնքային ենթակայության թվով 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններում (մարտի 12-ից 20-ը):

5. Դիտարկումներ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանում և համայնքային ենթակայության թվով 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններում (մարտի 24-ից 31-ը):

6. Տեսչական ստուգում «Երևանի N 8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում (մարտի 23-ից և ապրիլի 4-ը): Ստուգման ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ակտ:

7. ՀՀ Լոռու մարզի թվով 48 հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություն (ապրիլի 6-ից մինչև 30-ը): Ուսումնական հաստատություններից 24-ը միջնակարգ դպրոցներ են, 24-ը՝ հիմնական: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 27 արձանագրություն:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

- 1) Մանկավարժական կադրերի ընտրություն. 19 դպրոցներում՝ 33 անձ:
- 2) Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջների խախտումներ՝ 6 դպրոց:
- 3) Ուսպլանի խախտումներ 6 դպրոց
- 4) Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց մրցույթային հիմունքի՝ 2 դպրոց:
- 5) Կառավարման խորհրդի լիազորություններ՝ 8 դպրոց:
- 6) Ուսումնական աշխատանքի գծով տեղակալի պաշտոնային պարտականությունների կատարում՝ 1 դպրոց:
- 7) Դպրոցի մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորումների գործունեություն՝ 5 դպրոց:

- 8) Դպրոցում սովորողների թիվը գերազանցում է լիցենզիայով սահմանված թվաքանակին՝ 1 դպրոց:
- 9) Բացակայած սովորողների հաճախումների հաշվառում՝ 1 դպրոց:
- 10) Դասղեկի պաշտոնային պարտականությունների կատարում՝ 1 դպրոց:
- 11) Սովորողների թիվը գերազանցում է սահմանված թվին՝ 5 դպրոց:
- 12) Սովորողներն ընդունելություն, ազատում, տեղափոխություն՝ 6 դպրոց:
- 13) 200 և ավելի ժամ բացակայելու պատճառով սովորողը հեռացվել է դպրոցից՝ 1 դպրոց:
- 14) Սովորողի փոխադրում հաջորդ դասարան՝ 2 դպրոց:
- 15) Սովորողների անձնական գործեր՝ 1 դպրոց:
- 16) Դպրոցի դասարաններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը գերազանցել է սահմանված թվին՝ 2 դպրոց:
- 17) Ավարտական քննությունների ընթացակարգ՝ 1 դպրոց:
- 18) Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում՝ 1 դպրոց:
- 19) Դպրոցում չկան ներքին կարգապահական կանոններ՝ 1 դպրոց:
- 20) Ներքին գնահատում չի իրականացվել՝ 2 դպրոց:

8. Դիտարկումներ ՀՀ Շիրակի մարզի թվով 10, Գեղարքունիքի մարզի թվով 6 ավագ և Երևանի թվով 25 հիմնական դպրոցներում (ապրիլի 13-ից 30-ը):

9. ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում ուսումնասիրություն (մայիսի 11-27-ը):

1) Քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի կանոնադրության առկայությունը:

Գավառի, Գորիսի քաղաքապետարանների կանոնադրություններում, ինչպես նաև գլխավոր մասնագետի պաշտոնի նկարագրում նշված գործառույթները չեն ներառում կրթության ոլորտը կարգավորող իրավական

ակտերով տեղական ինքնակառավարման մարմինն և համայնքի ղեկավարին վերապահված գործառույթների ամբողջ ծավալը: Դիլիջանի քաղաքապետարանում առկա է քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը, որը հաստատվել է համայնքի ղեկավարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի N 31-Ա որոշմամբ:

2) Հաստատությունների կանոնադրությունների հաստատումը և դրանցում փոփոխությունների կատարումը:

Գորիսի, Դիլիջանի քաղաքապետարանների ենթակայության մանկապարտեզների կանոնադրությունները հաստատվել են համայնքի ղեկավարի համապատասխան որոշումներով, մինչդեռ դա համայնքի ավագանու լիազորությունն է: Գավառի քաղաքապետարանի ենթակայության թվով 5 և Գորիսի քաղաքապետարանի ենթակայության թվով 7 մանկապարտեզների կանոնադրություններում չի կատարվել «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության ՀՀ կառավարության 02.02.2012թ N 4 արձանագրային որոշմամբ 3-րդ բաժնի 17-րդ կետի փոփոխությունը:

3) Բաժնի 2013, 2014 թվականների աշխատանքային ծրագրերի կատարողականները:

Արարատի քաղաքապետարանի կրթության հարցերով զբաղվող մասնագետը տարեկան աշխատանքային ծրագիր չունի և իր գործառույթներն իրականացնում է քաղաքապետի կամ աշխատակազմի ղեկավարի հրամանների, հրահանգների և ցուցումների համաձայն: Գավառի քաղաքապետարանում ուսումնասիրությամբ ընկնող ժամանակահատվածի տարեկան աշխատանքային ծրագրեր չեն ներկայացվել, քանի որ աշխատակազմն առաջնորդվում է Գավառ համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագրով:

4) Մանկապարտեզների անվանակոչությունների իրավական հիմքերը և կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների առկայությունը:

Արարատի քաղխորհրդի գործկոմի 1990թ. հուլիսի 03-ի N 9/4 որոշմամբ Արարատի N2 մանկապարտեզն անվանակոչվել է Մովսես Գորգիսյանի անունով, սակայն մանկապարտեզի՝ 2007 և 2012 թվականներին (փոփոխություններով) պետական գրանցում ստացած կանոնադրության մեջ անվանակոչությունը հաստատված և գրանցված չէ:

5) Հաստատությունների հաստիքային ցուցակների հաստատումը:

Արարատի, Գորիսի, Գավառի մանկապարտեզների հաստիքացուցակները չեն համապատասխանում օրինակելի հաստիքացուցակին:

6) Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի և քաղաքապետի՝ կրթության բնագավառին առնչվող հրամանների, հրահանգների, հանձնարարականների, որոշումների, մեթոդական երաշխավորությունների կատարումը բաժնի կողմից:

Արարատի քաղաքապետարանի մանկապարտեզների աշխատանքները համակարգող մասնագետը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում աշխատակազմի ղեկավարին՝ իր կատարած աշխատանքների մասին: Ներկայացված հաշվետվությունները վերացական են, չեն պարունակում կոնկրետ տեղեկատվություն մանկապարտեզների գործունեության կազմակերպման կամ համակարգման մասին:

7) Մանկապարտեզներում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման կազմակերպումը:

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում Արարատ, Գավառ, Գորիս, Դիլիջան քաղաքների մանկապարտեզներում քաղաքապետարանների աշխատակազմերի կողմից փորձարարական և նորարարական գործունեության կազմակերպում չի իրականացվել:

8) Մանկապարտեզների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Ուսումնասիրությամբ ընկնող ժամանակահատվածում Դիլիջանի, Գավառի քաղաքապետարանների աշխատակիցների կողմից մանկապարտեզներում լիարժեք վերահսկողություն չի իրականացվել:

9) Հաստատությունների ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 26.02.2013թ. N 80 որոշմամբ համապատասխան որակավորում չունեցող անձը (ավարտել է ՀՀ ԿԳՆ Դիլիջանի պետական քոլեջը, շնորհված է ապրանքագետի որակավորում, ապրանքագիտություն մասնագիտությամբ) նշանակվել է «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն:

10) Համայնքում բնակվող նախադպրոցական տարիքի և նախադպրոցական տարիքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառումը և ընդգրկումը քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

–Ըստ տեղեկատվական տեխնոլոգիաների և զարգացման վարչության պետի ներկայացրած տվյալների՝ Արարատ քաղաքում գրանցված է 0-5 տարեկան 17 հաշմանդամ երեխա, որից 6-ը՝ աղջիկ: Մանկապարտեզներում իրականացված ստուգումների ընթացքում պարզվեց, որ նշված երեխաները ընդգրկված չեն մանկապարտեզներում:

–Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում Գավառ քաղաքում նախադպրոցական տարիքի, ինչպես նաև նախադպրոցական տարիքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում չի իրականացվել:

10. ՀՀ մարզերի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 22 ուսումնադաստիարակչական հաստատություններում ստուգումներ (մայիսի 11-27-ը):

ՀՀ Արարատի մարզի Արարատի, Գեղարքունիքի մարզի Գավառի, Տավուշի մարզի Դիլիջանի, Սյունիքի մարզի Գորիսի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով իրականացվել են ստուգումներ:

Ստուգումների արդյունքում 22 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 21-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը

կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 21 ակտ:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

- 1) Մանկապարտեզը չունի կրթական գործունեության թույլտվություն (լիցենզիա)՝ 8 մանկապարտեզ:
- 2) Մանկապարտեզի կանոնադրությունը համապատասխանեցված չէ ՀՀ գործող օրենսդրությանը՝ 12 մանկապարտեզ:
- 3) Մանկապարտեզի կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի կողմից՝ 13 մանկապարտեզ:
- 4) Հաստիքացուցակը չի համապատասխանում օրինակելի հաստիքացուցակի հետ՝ 12 մանկապարտեզ:
- 5) Մանկավարժական աշխատողների նշանակումը իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումով՝ 12 մանկապարտեզ:
- 6) Խմբերում սաների թիվը գերազանցում է սահմանված նորմատիվը՝ 11 մանկապարտեզ:
- 7) Մանկապարտեզում խմբերը չեն համալրվել ըստ նախադպրոցական տարիքային փուլերի՝ 7 մանկապարտեզ:
- 8) ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ նշված անվանման և մանկապարտեզի ցուցանակում նշված անվանման անհամապատասխանություն՝ 1 մանկապարտեզ:
- 9) Տնօրենը պատշաճ վերահսկողություն չի իրականացրել կրթադաստիարակչական աշխատանքների կատարման նկատմամբ՝ 2 մանկապարտեզ:
- 10) Մանկապարտեզի մեթոդիստի կողմից պաշտոնային պարտականությունների ոչ պատշաճ իրականացում՝ 3 մանկապարտեզ:
- 11) Մանկավարժական աշխատողները պատշաճ ձևով չեն կատարել իրենց պաշտոնային պարտականությունները՝ 1 մանկապարտեզ:
- 12) Կրթությունը չի իրականացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած նախադպրոցական կրթության

պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ 1 մանկապարտեզ:

- 13) Չեն ապահովվել մանկապարտեզի ավագ, միջին խմբերի կրթական համալիր ծրագրերի պահանջները՝ 2 մանկապարտեզ:
- 14) Մանկապարտեզ են հաճախում 6 տարին լրացած դպրոցահասակ երեխաներ՝ 2 մանկապարտեզ:
- 15) Մանկապարտեզում առկա չէ զարգացնող միջավայր՝ 2 մանկապարտեզ:
- 16) Երեխաների ընդունման և ազատման հրամանների, շարժի մատյանը վարումը չի իրականացվում սահմանված կարգով՝ 4 մանկապարտեզ:
- 17) Ներքին կարգապահական կանոնների առկայությունը՝ 3 մանկապարտեզ:
- 18) Հաստատության մանկավարժական կազմը վերջին 5 տարիների ընթացքում չեն մասնակցել մասնագիտական գիտելիքների կատարելագործման դասընթացների՝ 3 մանկապարտեզ:

11. ՀՀ ավագ դպրոցների 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն (հունիսի 3-ից 22-ը)

Ուսումնասիրության արդյունքում քննությունների կազմակերպման և անցկացման կարգի խախտումներ չեն արձանագրվել:

12. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում ուսումնասիրություն (հունիսի 22-ից մինչև հուլիսի 13-ը):

Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ բնույթի խախտումներ.

- 1) Դպրոցի տնօրենի ընտրության ընթացակարգի խախտումներ (կառավարման խորհուրդ)՝ 6 դպրոց:
- 2) Մարզի 88 դպրոցներում ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ աշխատանքի են ընդունվել թվով 262 մանկավարժական աշխատող (ուսուցիչ):
- 3) Քրդերեն կամ եզդիերեն ուսումնասիրող (որպես մայրենի լեզու) դպրոցներում դասավանդում են միջնակարգ կրթություն ունեցող ուսուցիչներ:

- 4) Ուսուցչի թափուր պաշտոնը համալրվել է ոչ մրցույթային հիմունքով՝ 22 դպրոց՝ 41 մասնագետ:
- 5) Ուսուցչի պաշտոնում նշանակված անձը չունի համապատասխան որակավորում՝ 40 դպրոցում՝ 50 անձ:
- 6) Ուսուցչի պաշտոնում ժամանակավորապես նշանակված անձը չունի համապատասխան որակավորում՝ 32 դպրոցում՝ 74 անձ:
- 7) Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի խախտումներ՝ 52 դպրոց:
- 8) Վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածության գերազանցում՝ 1 դպրոց:
- 9) Մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալը չունի համապատասխան որակավորում՝ 1 դպրոց:
- 10) Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը չունի համապատասխան որակավորում՝ 4 դպրոց:
- 11) Զինղեկի պաշտոն զբաղեցնողը չունի բարձրագույն կրթության և (կամ) սպայական կոչում՝ 3 դպրոց:
- 12) Հոգեբանը չունի համապատասխան որակավորում՝ 2 դպրոց:
- 13) Սոցիալական մանկավարժը չունի համապատասխան որակավորում՝ 1 դպրոց:
- 14) Գրադարանավարը չունի համապատասխան որակավորում՝ 20 դպրոց:
- 15) Լաբորանտը չունի համապատասխան որակավորում՝ 2 դպրոց:
- 16) Քաղաքացիների, մանկավարժների՝ ՀՀ պետական մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունելության և շրջանավարտների՝ մանկավարժական աշխատանքում ընդգրկված 13 մանկավարժներից 3-ը աշխատում են թերբեռնված:
- 17) Դպրոցը չունի կրթական գործունեության թույլտվություն՝ լիցենզիա. 9 դպրոց:
- 18) Ուսումնական պլանի պահանջներ՝ 55 դպրոց:
- 19) Դպրոցը գերազանցել է սովորողների սահմանային տեղերը՝ 15 դպրոց:

- 20) Թալինի թիվ 1 հիմնական դպրոցում սովորում է վկայագրված 17 ԿԱՊԿՈՒ երեխա, սակայն վերը նշված դպրոցում դեռևս չի իրականացվում ներառական կրթություն:
- 21) Խորհուրդների կազմերում կատարվել են փոփոխություններ. ժամկետի և քվեարկության ընթացակարգի խախտումներ են թույլ տվել թե՛ առաջադրող մարմինները, թե՛ ներկայացնող մարմինը (տնօրենը) և թե՛ լիազոր մարմինը:
- 22) Ուսումնական հաստատությունների խորհուրդների ձևավորման գործընթացում առկա են բազմաթիվ խախտումներ՝ կապված ծնողական կամ մանկավարժական խորհուրդների կողմից անցկացված քվեարկությունների և ձայների հաշվման ընթացակարգերի հետ:

13. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում ուսումնասիրություն (հունիսի 22-ից մինչև հուլիսի 3-ը)

Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ բնույթի խախտումներ.

- 1) Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի ընթացակարգի խախտում՝ 2 դպրոց:
- 2) Ուսուցչի թափուր տեղը համալրվել է ոչ մրցութային հիմունքներով՝ 6 դպրոց:
- 3) Ուսուցչի թափուր տեղը համալրվել է մրցութային հիմունքներով, սակայն մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը չունի համապատասխան որակավորում՝ 1 դպրոց:
- 4) Ուսուցչի պաշտոնում ժամանակավորապես աշխատանքի ընդունված անձը չունի համապատասխան որակավորում՝ 6 դպրոց:
- 5) Ուսուցչի թափուր տեղի մրցույթի ընթացակարգի խախտումներ՝ 4 դպրոց:
- 6) Գրադարանավարի պաշտոնում նշանակված անձը չունի համապատասխան որակավորում՝ 10 դպրոց:
- 7) Սոցիալական մանկավարժի պաշտոնում նշանակված անձը չունի համապատասխան որակավորում՝ 3 դպրոց:
- 8) Ուսումնական պլանի պահանջներ՝ 32 դպրոց:

14. ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություն (սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 23-ը):

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 19 արձանագրություն:

- 1) Մանկավարժական կադրերի սխալ ընտրություն. 15 դպրոցներում՝ 28 անձ:
- 2) Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջների խախտում՝ 10 դպրոց:
- 3) Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթ հայտարարելու՝ 4 դպրոց:
- 4) Դպրոցի տնօրենը չի կատարել աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև, տնօրենը մանկխորհրդի ներկայացմամբ չի հաստատել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը՝ 1 դպրոց:
- 5) Կառավարման խորհրդի լիազորություններ՝ 9 դպրոց:
- 6) Կառավարման խորհուրդը տնօրենի թափուր տեղի համար մրցույթ չի անցկացրել՝ 3 դպրոց:
- 7) Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը չի կատարել իր պարտականությունները՝ 1 դպրոց:
- 8) Ուսպլանի խախտումներ՝ 6 դպրոց:
- 9) Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյանում և դասամատյաններում առկա են գնահատականների անհամապատասխանություններ՝ 1 դպրոց:
- 10) Դպրոցում համապատասխան մասնագետ չլինելու պատճառով չի դասավանդվում առարկան՝ 2 դպրոց:
- 11) Հաստատության հիմնական դպրոցի շրջանավարտների հիմնական կրթության վկայականներում, քննական արձանագրության մեջ և դասամատյանում առկա են անհամապատասխանություններ՝ 2 դպրոց:
- 12) Սովորողը սահմանված կարգի խախտումով փոխադրվել է հաջորդ դասարան՝ 2 դպրոց:

15. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թվով 22 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ստուգումներ (նոյեմբերի 2-ից 27-ը)

Ստուգումների արդյունքում 22 մանկապարտեզներից 18-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 18 ակտ:

- 1) Մանկապարտեզները չունեն նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա (16 մանկապարտեզ):
- 2) Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով մանկավարժական աշխատողներին հասանելիք հաստիքային միավորները չեն հատկացվել սահմանված կարգով. հատկացվել են սահմանված նորմից պակաս, կամ ընդհանրապես չեն հատկացվել (17 մանկապարտեզ):
- 3) Տնօրենը, մեթոդիստը, լրացուցիչ կրթության մանկավարժները իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ են կատարում (1 մանկապարտեզ):
- 4) Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով (5 մանկապարտեզում՝ 8 մանկավարժական աշխատող):
- 5) Մանկավարժական անձնակազմի ոչ բոլոր անդամներն են վերապատրաստվել վերջին 5 տարիների ընթացքում (3 մանկապարտեզ):
- 6) Չեն պահպանվել պարապմունքների անցկացման ժամանակացույցի կազմմանը, ինչպես նաև ծրագրային նյութին ներկայացվող պահանջները (1 մանկապարտեզ):
- 7) Խմբերը գերբեռնված են (9 մանկապարտեզ):
- 8) Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չեն սահմանվել չափորոշիչ համապատասխան որակական պահանջներ (4 մանկապարտեզ):

- 9) Տնօրենի հրամանով ազատված երեխաները հաճախում են մանկապարտեզ, ներկա են խմբում (1 մանկապարտեզ):
- 10) Շարժի մատյանի վարման կարգի խախտումներ (3 մանկապարտեզ):
- 11) Չեն տրամադրվել ստուգման ժամանակահատվածում ընդգրկվող որոշ փաստաթղթեր (1 մանկապարտեզ):

16. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թվով 22 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ստուգումներ (դեկտեմբեր)

17. Ստուգումներ ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի հ.1 պետական արհեստագործական ուսումնարաններում (արդյունքները ամփոփման փուլում են)

18. Դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ստուգում կամ ուսումնասիրություն

2015թ. ՀՀ կրթության պետական տեսչությունում ստացվել է 19 դիմում (ներառյալ «Թեժ գիծը»):

19. 2015թ. ընթացքում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների դպրոցների տնօրենների նկատմամբ կարգապահական տույժեր չեն կիրառվել:

Ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Ստուգումների, ուսումնասիրությունների, դիտարկումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Խախտումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքները, վերլուծությունները հրապարակվել է www.kpt.am կայքում:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ.

Ընդունված իրավական ակտեր.

1. «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք
Ներդրվել է գիտական և գիտատեխնիկական ծրագրերի/թեմաների ընտրության ու հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգ, ինչը կնպաստի գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

2. ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1101-Ն որոշում.

Գիտաշխատողին գիտական աստիճանի համար հավելավճար կարող է հատկացվել միայն մեկ ծրագրից՝ դրանից օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձից ոչ պակաս չափով վարձատրություն ստանալու դեպքում:

3. ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության բնագավառում լիազոր մարմնի կարգավիճակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1102 – Ն որոշում.

Գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին է սահմանվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն:

4. ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1106-Ն որոշում.

Գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների գիտական աշխատողներն ընդգրկվել են ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկում:

5. ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերին հավանություն տալու մասին» թիվ 44-26 արձանագրային որոշում:

6. ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» N 1255 - Ա որոշում:

Իրավական ակտերի նախագծեր.

1. «Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծ,

2. «Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ:

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.

1. Հայտարարվել և կազմակերպվել է գիտական ծրագրերի ֆինանսավորման 6 մրցույթ.

- Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի հետ համատեղ անցկացվող հումանիտար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության մրցույթ (ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՌՀԳՀ-2016): Ստացվել է 27 հայտ, արդյունքներն ամփոփվում են.

- «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2015» մրցույթ: Ստացվել է 16 հայտ, ֆինանսավորվել է 5-ը.

- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթ: Ստացվել է 21 հայտ: Ֆինանսավորման երաշխավորված 6 կազմակերպությունների տրամադրվել է ընդհանուր 301.700.0 հազար ՀՀ դրամ:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ: Ստացվել է 405 հայտ, ֆինանսավորվել է 153-ը:

- Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ: Ստացվել է 122 հայտ: Արդյունքում՝ 35 գիտնականներ մեկ տարի ամսական կտրվածքով կստանան 75 000 դրամ հավելավճար՝ ներառյալ հարկերը: Մրցույթն իրականացվում է Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի հետ համատեղ:

- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ: Ստացվել է 22 հայտ:

2. *Կազմակերպվել է 2014 թ. վերջին հայտարարված մրցույթների հայտերի գիտական փորձաքննությունը, ամփոփվել են արդյունքները.*

- «Ռեգիոնալ զոտոպաների արտադրության կենտրոն» ՓԲԸ «CYCLONE 18/18» ցիկլոտրոնի վրա իրականացվելիք գիտական թեմաների մրցույթ: Ստացվել է 11 հայտ: Ֆինանսավորման է երաշխավորվել 4 թեմա:

- Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ: Ստացվել է 284 հայտ: Արդյունքում 100 գիտնականներ մեկ տարի ստանում են ամսական կտրվածքով 135000 դրամ՝ ներառյալ հարկերը:

- Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթ: Ստացվել է 91 հայտ, ֆինանսավորվել է 25-ը:

3. *Կազմակերպվել է՝*

3.1 գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունների գնահատումը՝

- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում՝ 159,

- «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013» մրցույթի շրջանակներում՝ 28,

- «ԳՊԿ-ՀՀՌՀ-2013» մրցույթի՝ 17,

3.2 գիտական թեմաների ընթացիկ հաշվետվությունների գնահատումը՝

- «ԳՊԿ-ՌՀԳՀ-2014» մրցույթի շրջանակներում՝ 8

- «ԳՊԿ-ԳՀԱԿ-2013» մրցույթի շրջանակներում՝ 5:

4. 2015 թ. իրականացվել են պետական բյուջեում ընդգրկված թվով 16 գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրեր՝ ընդհանուր՝ 1.839.406,2 հազ. դրամ ֆինանսավորման ծավալով:

5. Հաշվետու ժամանակաշրջանում կոմիտեի միջոցով ֆինանսավորվել է երիտասարդ գիտնականների 9 դպրոց, 43 գիտական միջոցառում:

6. Բազային ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում կոմիտեի աջակցությամբ իրականացվել են 32 միջազգային գործուղումներ:

7. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող 3 կազմակերպությունների գիտական սարքավորումներով վերազինման նպատակով տրամադրվել է 20.008,0 հազ. դրամ:

8. ՀՀ գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների անձնագրավորման նպատակով հավաքագրվել են բազային ֆինանսավորում ստացող 64 կազմակերպությունների 2013-14 թթ. գործունեության վերաբերյալ տվյալներ:

9. Թարմացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում կամ թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալների շտեմարանը: 2015 թ. սեպտեմբերի դրությամբ շտեմարանը պարունակում է գիտության 518 դոկտորների ու 1385 թեկնածուների տվյալներ:

10. Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության նպատակով ֆինանսավորում է տրամադրվել 9 գիտական կազմակերպության՝ 24.640,0 հազ. դրամ ընդհանուր ծավալով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

1. Իրականացվել են հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-ռուսական, հայ-բելառուսական համատեղ ծրագրեր:

2. Աշխատանքներ են տարվել Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության ուղղությամբ:

3. 2015 թ.-ից մեկնարկել է «Հայ-Ֆրանսիական գիտական համագործակցության մասին» պայմանագրի շրջանակներում իրականացվող 2 միջազգային լաբորատորիաների և 1 միջազգային գիտահետազոտական խմբի աշխատանքների ֆինանսավորումը:

4. 2015 թ. հոկտեմբերին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, Երևանի պետական համալսարանի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ անցկացվել է «Հայ-գերմանական գիտության օր» միջոցառումը:

5. Հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ հետ համատեղ Երևանում կազմակերպվել է ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտությունների ոլորտում համագործակցության խորհրդի 4-րդ նստաշրջանը:

6. 2015 թ. հուլիսի 22-ին կնքվել է ԵՊՀ և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) միջև Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի ստեղծման մասին պայմանագիր: Ստորագրման հիմքում ընկած է 2013 թվականի մայիսի 17-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) միջև կնքված կրթության և գիտության ոլորտներում համագործակցության մասին պայմանագիրը:

7. 2015 թ. դեկտեմբերին ստորագրվել է «Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի գործունեությունը շարունակելու մասին» համաձայնագիրը:

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

- 1. Իրականացվել են 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) սպասարկման, կառավարման և ցանցային սարքավորումների պահպանման աշխատանքները: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ (յուրաքանչյուր դպրոցին մեկական 3G մոդեմ) և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ:**

Վայոց Ձորի մարզում «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի շրջանակներում մարզի բոլոր դպրոցների տարրական դասարանների համար նախատեսված տարածքներում ապահովվել է անլար կապի ծածկույթ, իսկ առնվազն 5 Մբ/վրկ թողունակությամբ կապուղով դպրոցները միացվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցին:

2. Շահագործվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը. Հայաստանի Հանրապետության 5 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 16 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 447 աշակերտի և 338 ուսուցչի համար:

3. Շահագործվել է

-«Հայկական կրթական միջավայր» պորտալը (<http://www.armedu.am/>), հարստացվել է բովանդակային պարունակությունը, գործարկվել են պորտալի ենթակայքերը և կրթական այլ կայքեր.

- «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (<http://forum.armedu.am>), որն ունի ավելի քան 1050 թեմա, 14050 գրառում, շուրջ 4040 գրանցված օգտվողներ: Հանրային քննարկման են ներկայացվել կրթական փաստաթղթերի, ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի նախագծերը, 2015-2016թթ. մրցույթներով անցած, դպրոցներում փորձարկվող դասագրքերը:

- «Հեռավար ուսուցում» համակարգը (<http://learning.armedu.am/>), որտեղ ուսուսուցիչների համար կազմակերպվել են 15 հեռավար դասընթացներ, այդ թվում՝ «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով երկու (46 մասնակից, որոնցից 30-ին տրվել են հավաստագրեր), ութ ուսումնական առարկաների գծով՝ 13 դասընթացներ:

- «Պաշարների շտեմարան» կայքը (<http://lib.armedu.am>), որտեղ ըստ դասակարգված բաժինների տեղադրվել է ավելի քան 1555 նոր էլեկտրոնային պաշար (պաշարների ընդհանուր քանակը՝ 3639, գրանցված օգտագործողներ՝ 2367), այդ թվում՝ 2015-2016 ուստարվա հիմնական

դպրոցի 18 գործող դասագրքերի, 2015-2016 ուստարվա հիմնական դպրոցի փորձարկվող 7 դասագրքերի, Ազգային փոքրամասնությունների (քրդերեն, եզդիերեն) 18 դասագրքերի էլեկտրոնային տարբերակները, «Կրթություն» շաբաթաթերթի 2015թ. հրապարակված բոլոր համարները և այլ ուսումնական պաշարներ:

- Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի մասին տեղեկատվություն ապահովող կայքը (<http://etwinningplus.amedu.am/>):
 - «Հանրակրթությունը Հայաստանում. Վիճակագրական տեղեկատու» (<http://stat.amedu.am/>), «Ավարտական փաստաթղթերի և հաշվառման համակարգ» (<http://students.amedu.am/>), «Դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգ» (<http://schoolrate.amedu.am/>) և «Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգ» (<http://ranking.amedu.am/>) կայքերը:
 - **Դպրոցական կայքերի ստեղծման նպատակով 109 ուսումնական հաստատությունների (<http://schoolsite.am/> միջավայրում) տրամադրվել են ենթադոմեններ, կայքի հայալեզու կադապար և մուտքի հնարավորություն, ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն:**
 - **Ստեղծվել և շահագործվել են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» պորտալը (<http://vetarmenia.am/>) և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գազաթաժողովի և Բոլոնիայի գործընթացի քաղաքական ֆորումի կայքը (<http://bologna-yerevan2015.ehea.info/>):**
 - **Շահագործվել են «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» (<http://studyinarmenia.org/>) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (<http://ktak.am/>) կայքերը:**
4. Իրականացվել են աշխատանքներ՝ հանրակրթակկական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքման, մշակման, վերլուծության և հրապարակման ուղղությամբ.

- Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (ԴԿՏՀ) կատարվել են ծրագրային թարմացումներ, ԿՏԱԿ-ին փոխանցված Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (ՄԿԿՏՀ)՝ տեխնիկական առաջադրանքի վերանայման, համակարգի բովանդակային լրամշակման, ծրագրային սպասարկման աշխատանքներ:
- Հրատարակվել է 2015-2016 ուսումնական տարվա Ձև 1 «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևը, թղթային և էլեկտրոնային տարբերակներով իրականացվել են դպրոցների վիճակագրական տվյալների հավաքագրման և մուտքագրման աշխատանքները:
- Հրատարակվել է «Կրթություն և տեխնոլոգիա 2015» վիճակագրական տեղեկագիրը և բաշխվել շահագրգիռ կազմակերպություններին:
- ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների և տնօրենների շրջանում իրականացվել են 2014-2015 ուստարում ՏՀՏ կարիքի ուսումնասիրություն և ՏՀՏ կիրառման հետազոտություն:

5. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրության, գործընկերային կապերի հաստատման և այդ ծրագրերի համակարգման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, քննարկումներ, իրականացվել համատեղ աշխատանքներ, մասնավորապես.

- **Ցուցաբերվել է աջակցություն ու մասնակցություն ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում անցկացված միջոցառումներին (մասնավորապես՝ Geeks on Wheels, Office365):**

- Ըստ անհրաժեշտության, կազմվել են և տարբեր շահագրգիռ կազմակերպությունների ներկայացվել հանրակրթության ոլորտը

քննությամբ վերջին 5 ուստարիների ամփոփ վիճակագրական տեղեկանքներ ու աղյուսակներ:

- Մշակվել է «Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ուղեցույցը», ուղեցույցի բաժինների ամբողջականացման նպատակով Վորլ Վիժնի և ՅՈՒՆԻՍԵՖ հետ համատեղ նախապատրաստվել և անցկացվել է երկօրյա աշխատաժողով Աղվերանում:
- Կազմակերպվել է «Դպրոցական վտանգների քարտեզ» թեմայով հանդիպում և շնորհանդես՝ Միջին Ասիայի երկրների (Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Թուրքմենիա) շուրջ 20 ԱՌՆ գործընկերների համար:

6. Կազմակերպվել են գործուղումներ Արցախ. համագործակցության շարունակականության վերաբերյալ հարցերի քննարկման, Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում ներքին համակարգչային ցանցի նախագծման աշխատանքները իրականացնելու և ՇԻՀԿ աշխատանքները ստուգելու նպատակով, Ստեփանակերտում անցկացվել է սեմինար-վերապատրաստում Արցախի բոլոր շրջանների կրթության պատասխանատուների և Ստեփանակերտի դպրոցների տնօրենների համար՝ հանրակրթության վիճակագրության հավաքագրման մեթոդաբանության ներկայացման ուղղությամբ:

7. Իրականացվել են աշխատանքներ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի շրջանակներում.

- հաստատման են ներկայացվել 2014թ. իրականացրած ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները, կազմվել և ստորագրվել է 2015թ. դրամաշնորհային պայմանագիրը, մշակվել և ներկայացվել է 2016թ. դրամաշնորհային ծրագրի նախագիծը,
- համակարգվել է ծրագրի մասնակից 60 դպրոցների շուրջ 225 ուսուցիչների աշխատանքը, ծրագրում ընդգրկված ուսուցիչների համար անցկացվել են տեղեկատվական-ճանաչողական առցանց և հանդիպում-սեմինարներ,

- ապահովվել է մասնակցություն Աջակցող գործընկեր կազմակերպությունների աշխատանքային հանդիպումներին՝ Բրյուսելում և ուսուցիչների սեմինար խորհրդակցություններին՝ Վարշավայում,
- նախապատրաստվել և Հայաստանում (Ադվերանում) անցկացվել է ուսուցիչների միջազգային սեմինար 6 երկրների 40 ներկայացուցիչների մասնակցությամբ,
- կազմակերպվել է ծրագրի 2015թ. ամփոփման և Թվինինգ Պլյուս Որակի ազգային հավաստագրի և մրցանակների շնորհման միջոցառումը:

8. Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին:

9. Կատարվել են աշխատանքներ բուհերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015թ. վարկանիշավորման ուղղությամբ.

- իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման, նոր՝ միասնական ցանկով փորձնական վարկանիշավորման մեթոդաբանության մշակման աշխատանքներ, ինչպես նաև վերոնշյալ լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,
- հրապարակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկը, իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում,
- կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ,
- իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի շրջանակներում:

10. «Կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրի» նախագծի մշակման շրջանակում իրականացվել են ֆոկուս խմբերի և փորձետների հարցումներ (հարցաշարերի կազմում, դաշտային աշխատանքների կազմակերպում, տվյալների հավաքագրում, ամփոփում և վերլուծություն), ինչպես նաև առկա իրավիճակի փաստագրում և վերլուծություն:

**«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ և ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

1. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն»

- ԱՓՇԱՏԿ-ը 2015թ.-ի ընթացքում 1000-ից ավելի շահառուների տրամադրել է որակավորումների ճանաչման և խորհրդատվական ծառայություններ:

- Կենտրոնը մասնակցել է Բոլոնիայի գործընթացի շրջանակներում գործող աշխատանքային խմբերի աշխատանքներին:

- ԱՓՇԱՏԿ-ի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են մի շարք միջազգային հանդիպումների և կոնֆերանսների: Կենտրոնը ընգրկված է նաև ՏԵՄՊՈՒՍ-ի «ԱՐՄԵՆՔԱ - Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակի իրագործում» ծրագրում: «ԱՐՄՆԵՔԱ» նախագիծը եռամյա ազգային ծրագիր է (2014-2016թթ.), որն ուղղված է Հայաստանում որակավորումների ազգային և սեկտորիալ շրջանակների ներդրմանը, որակավորումների ճանաչմանը՝ ազգային և միջազգային աշխատաշուկայում: 2015թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում կայացել են հանդիպումներ արտերկրում, այդ թվում սեմինարներ, թրեյնինգներ և հանդիպումներ:

- 2015թ.-ին վերանայվել է դիպլոմի միասնական հավելվածի 8-րդ կետը՝ կրթական համակարգի նկարագրությունը: Նյութը պատրաստվել է նաև անգլերեն լեզվով:

- ԱՓՇԱՏԿ-ը տարբեր ակադեմիական փաստաթղթերի, կրթական համակարգերի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ոլորտին

վերաբերող բազմաթիվ հարցերի վերաբերյալ պարզաբանում և խորհրդատվություն է տրամադրել քաղաքացիներին:

2. Բոլոնիայի քարտուղարություն

2012թ. Բուխարեստում կայացած Բոլոնիայի գործընթացի նախարարական գագաթաժողովում Հայաստանը ընտրվեց որպես՝ 2015թ. նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիր: Համաձայն Բոլոնիայում ընդունված կանոնակարգի՝ Հայաստանը նաև ստանձնեց Բոլոնիայի քարտուղարության պարտականությունը:

Նշված ժամանակահատվածու քարտուղարությունը շարունակել է աջակցել ԲԳՀԽ-ի աշխատանքային խմբերի (ԱԽ), ենթախմբերի և համացանցերի գործունեությանը, որն ուղղված է իրականացնելու ԲԳՀԽ-ի 2012-2015թթ. աշխատանքային ծրագիրը:

Մայիսի 14-15-ը Երևանում անցկացվել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի և Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումը, որին մասնակել են ավելի քան 140 երկրներ ու կազմակերպություններ:

Երևանի գագաթաժողովի ժամանակ վավերացվեցին Երևանի կոմյունիկեն և 4-րդ քաղաքական ֆորումի հռչակագիրը, տեղի ունեցավ Բելառուսի անդամակցությունը Բոլոնիայի գործընթացին: Որոշվեց նաև, որ հաջորդ գագաթաժողովը տեղի կունենա Փարիզում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

- Հանրակրթական դպրոցի բնագիտական 4 առարկաների /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն/ ուսուցիչների վերապատրաստման որակը բարձրացնելու, նրանց մասնագիտական կարողություններն ու հմտությունները զարգացնելու նպատակով Համաշխարհային բանկի վարկային միջոցների հաշվին ԾԻԳ-ի միջոցով ձեռք են բերվել վերոնշյալ առարկաների 3 հավաքածու լաբորատոր սարքավորումներ,

որոնք տեղակայվել են ԿԱԻ Երևանի կենտրոնական մասնաշենքում, հյուսիսային մասնաճյուղերից Վանաձորում և հարավային մասնաճյուղերից Գորիսում: Լաբորատորիաները կապասարկեն ՀՀ կենտրոնական, հյուսիսային և հարավային շրջանների բնագիտական առարկաների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

- Հաշվի առնելով նախորդ հնգամյա փուլում /2011-2015/ ԿԱԻ կողմից իրականացված հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացների վերլուծություն և ներկայացվել նոր նախագիծ: Ըստ նոր նախագծի՝ կփոխվի վերապատրաստումների կազմակերպման ռեժիմը: Եթե նախորդ տարիներին վերապատրաստումները իրականացվում էին խտացված գրաֆիկով՝ հիմնականում մայիս, հունիս ամիսներին, ապա նոր նախագծով դրանք համամասնորեն կբաշխվեն մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածում:

- ԿԱԻ Վանաձորի և Գորիսի մասնաճյուղերում բնագիտական 4 առարկաների լաբորատորիաները տեղակայելու, Հրազդանի մասնաճյուղի ջեռուցման հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով այդ մասնաճյուղերում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

(2015 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը ԿԱԻ և նրա մասնաճյուղերի կողմից իրականացրած վերապատրաստումների վերաբերյալ)

ԿԱԻ-ն իր մասնաճյուղերի հետ միասին՝ ըստ նախօրոք մշակված և հաստատված ծրագրերի և մոդուլների (բովանդակային նյութերի փաթեթ) կազմակերպել և իրականացրել է հանրակրթական հաստատությունների մանկավարժական կադրերի տարբեր ժամաքանակներով վերապատրաստման հետևյալ դասընթացները.

- ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա 5165 ուսուցիչների,

- **ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա 668 ուսուցիչների,**
- **ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների «Ազգային երգ և պար» առարկայի 96 ուսուցիչների,**
- ԱՄՆ Խաղաղության կորպուսի հետ համատեղ կազմակերպել է հանրապետության հիմնական և ավագ դպրոցների անգլերենի ուսուցիչների on-line (առցանց) վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են 30 ուսուցիչներ:
- ՀՀ հանրակրթական դպրոցների ասորերեն լեզու դասավանդող 7 ուսուցիչների:
- Արտերկրի 13 երկրներից ժամանած սիյուռքահայ 63 ուսուցիչների:

Կազմակերպվել և իրականացվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի և հավաստագրի 171 հավակնորդների, ներառական դպրոցի կարգավիճակ հայցող 39 դպրոցների 1128 մանկավարժական աշխատողների, տնօրենների ուսումնական աշխատանքի գծով 61 տեղակալների, տնօրենների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով 10 տեղակալների, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների 16 կազմակերպիչների, 51 հոգեբանների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների 558 մասնագետների /տնօրեններ, դաստիարակներ և երաժշտության դաստիարակներ/ վերապատրաստման դասընթացներ:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԻ-ի կողմից փորձաքննության են ենթարկվել 204 անուն /62224 էջ/ հանրակրթական և բուհական չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնաօժանդակ գրականություն: 7 անուն/1225 էջ/ դասագրքեր, որոնք 2016թ. սեպտեմբերից պետք է մուտք գործեն հանրակրթական դպրոց, այժմ գտնվում են փորձարկման փուլում:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Հանրակրթական պետական չափորոշչով նախատեսված սովորողների կարողությունների և հմտությունների, ինչպես նաև մանկավարժական աշխատողների առարկայական-մեթոդական զարգացման ուղղությամբ կատարվել են 130 անուն բովանդակային և մեթոդական մշակումներ, որոնց զգալի մասը վերաբերում է Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին (ձեռնարկներ, ուղեցույցներ, հոդվածներ և այլն):

ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Մշակվել են՝

- Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների նախագծերը,
- 2015-2016 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը,
- «Մեկ երեխա՝ մեկ համակարգիչ» փուլային ծրագրին և փորձնական փուլի նկարագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման պահանջների հիման վրա ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-4-րդ դասարանների՝ «Մայրենի», «Մաթեմատիկա», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա» առարկաների փորձնական չափորոշիչների և նույն առարկաների առաջին դասարանների ծրագրերի լրամշակում:
- Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլան և ժամանակացույց, ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

- Հրատարակվել են 10 անուն/42 համար/ մանկավարժական ամսագրեր :

ՄԿՈՒՉԱԿ

2015թ. Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը հաստատված տարեկան աշխատանքային պլանին համապատասխան իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Մշակվել է նախնական և միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչների նախագծեր: Վերանայվել են նախկինում մշակված և գործողության մեջ դրված նախնական և միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչները:

2. Վերապատրաստվել են.

- ՄԿՈՒ 20 հաստատությունների 42 տնօրեններ և փոխտնօրեններ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման հարցերով,
- ՄԿՈՒ հաստատությունների 1016 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ,
- ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների 43 անդամներ,
- պետական կրթական չափորոշիչների նախագծեր մշակող 30 փորձագետներ:

3. Dasar.am կայքէջում ստեղծվել և գործում է նախնական և միջին մասնագիտական կրթության տեղեկատվական հարթակը:

4. Մշակվել են 15 անուն ուսումնական ձեռնարկներ և մեթոդական նյութեր:

5. Հայաստանի նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներից ձևավորված թիմը 2015թ. օգոստոսի 11-16-ը մասնակցել է Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում կայացած «Աշխարհի հմտություններ» մրցույթին:

6. Պատրաստվել և տպագրվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագրի 2015 թվականի համարները:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կրթության բարելավում» վարկային ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչ՝ «Հանրակրթության որակի բարելավում», որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

- 1.1 Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում
- 1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը
- 1.3 Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում
- 1.4 Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Երկրորդ բաղադրիչ - Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը

Բաղադրիչ 1

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է 2010-2014 թթ. «Կրթության որակ և Համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանականերում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքի վարչական շրջաններում Նախադպրոցական Կրթական Միկոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների հետազոտության վերջնական հաշվետվությունը: 2015 թվականին ստեղծվել են 33 նախակրթարական հաստատություններ ՀՀ Կոտայքի (13), Շիրակի (12) և Գեղարքունիքի (8) մարզերում, որտեղ իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական

նյութեր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Բոլոր հաստատությունները բնականոն գործում են: Նոր նախակրթարաններում ընդգրկված են մոտ 1170 երեխա:

Կրթության Ազգային Ինստիտուտի կողմից վերապատրաստվել են բոլոր 3 մարզերի 33 նախակրթարաններում ընդգրկված թվով 79 դաստիարակ:

Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

Հանրակրթության երրորդ աստիճանում որակյալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է ժամանակակից ենթակառուցվածքների, համապատասխան նյութատեխնիկական միջոցների առկայությունը:

Ենթաբաղադրիչի շրջանակում կիրականացվի 107 ավագ դպրոցներից 17 ավագ դպրոցների հիմնանորոգում: Դպրոցներից շատերը կառուցվել են խորհրդային միության տարիներին և ունեն ենթակառուցվածքային թերություններ, ներառելով ոչ լիարժեք ջեռուցման համակարգեր, սեյսմիկ անվտանգության և այլ խնդիրներ:

Հաշվետու ժամանակահատվածում ենթաբաղադրիչի շրջանակներում 5 և 12 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման նպատակով պատրաստվում են նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Վերանորոգման նախագծերը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվում ավագ դպրոցների կարիքներին՝ հոսքային ուսուցման կազմակերպման համար (տեխնիկական, բնագիտական, հումանիտար և այլն), որպեսզի հաշվի առնվի, թե ինչ տիպի դասասենյակներ, սարքավորումներ անհրաժեշտ կլինեն դպրոցին, օր.՝ ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության լաբորատորիաներ, համակարգչային սենյակներ և այլն:

Վերանորոգվող դպրոցները ընտրվել են ՀՀ ԿԳ նախարարության կողմից մշակված և Համաշխարհային բանկի կողմից հաստատված չափանիշների հիման վրա, որտեղ բացի շենքային պայմանների գնահատականից, հաշվի է առնվել դպրոցի կառուցման տարեթիվը, սպասարկող ոլորտը և աշակերտների թիվը:

Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Ենթաբաղադրիչի նպատակներն են.

- Բարելավել կրթության որակը կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:
- Ապահովել սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավումը համաձայն արդի պահանջների:

Ենթաբաղադրիչի խնդիրներն են.

- աջակցել հանրակրթական դպրոցի տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերին համապատասխան՝ առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայմանը,
- կարճատև վերապատրաստումների միջոցով ուսուցիչներին իրազեկել նոր առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունները փոխկապակցված են և պետք է իրականացվեն հաջորդաբար, քանի որ յուրաքանչյուր հաջորդ գործողություն պետք է հիմնվի նախորդի արդյունքների վրա: Այսպես, ենթաբաղադրիչի շրջանակներում պլանավորված են հետևյալ աշխատանքները, որոնք 2015 թվականից սկսած հաջորդաբար պետք է իրականացվեն:

Նախատեսված է ծրագրի ընթացքում.

- իրականացնել կարիքների գնահատման հետազոտություն կրթակարգի վերանայման ուղղությամբ,
- հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման նպատակով ձևավորել աշխատանքային խումբ, որը կմշակի նոր հայեցակարգ,

- ստեղծել աշխատանքային խմբեր հանրակրթական ընդհանուր հիմնական ծրագրի առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայման նպատակով,
- իրականացնել ուսուցիչների կարճատև տեղեկատվական բնույթի վերապատրաստումներ,
- կազմակերպել վերապատրաստման դասընթացներ դասագրքերի հրատարակիչների և նրանց կողմից ներկայացված հեղինակների հավանական կազմի համար:

2015 թվականի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են տարվել հանրակրթության պետական չափորոշիչ, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման նպատակով նախատեսված հետազոտությունն իրականացնելու ուղղությամբ: Հետազոտության նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ՝ ուսումնասիրության ենթակա հարցերի ճշգրտման և տեխնիկական առաջադրանքի նախագիծը պատրաստելու համար: Ելնելով քննարկումների արդյունքներից, հանրակրթության պետական չափորոշիչ, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտությունն իրականացնելու նպատակով մշակվել և ներկայացվել է ՀԲ համապատասխան տեխնիկական առաջադրանքը: ՀԲ-ից ստացված առաջարկությունների հիման վրա հետազոտության տեխնիկական առաջադրանքը լրամշակվել և ներկայացվել է ՀՀ ԿԳՆ՝ կարծիքի:

Հետազոտության տեխնիկական առաջադրանքը հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից: Հետազոտության իրականացման նպատակով խորհրդատվական կազմակերպության ընտրության համար 2015 թվականի օգոստոսի 10-ին տրվել է հայտարարություն Կրթության և գիտության նախարարության և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի վեբ կայքերում: Հայտարարությունը վերահրապարակվել է 2015 թվականի օգոստոսի 25-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի վեբ կայքում: Հետաքրքրության հայտ է ներկայացվել 3 կազմակերպությունների կողմից: Գնահատման արդյունքում հաղթող է ճանաչվել «Ի-վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ն «Այբ» կրթական հիմնադրամի հետ

համատեղ: 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նոյեմբերին ներկայացվել է գնահատման հետազոտության մեթոդաբանությունը, որի քննարկման նպատակով ԾԻԳ-ում կայացել է աշխատանքային խորհրդակցություն՝ ԿԳՆ աշխատակիցների, ԿԱԻ և ԳԹԿ մասնագետների, դպրոցների տնօրենների և հետազոտությունն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Դիտողությունների հիման վրա հետազոտության մեթոդաբանությունն ու ընտրանքը հստակեցվել է: Ներկայումս գնահատման հետազոտության աշխատանքներն ընթացքի մեջ են: Նախատեսվում է աշխատանքների ավարտական փուլում հրավիրել հետազոտության նախնական արդյունքների քննարկում, որին ի թիվս այլ շահակիցների կմասնակցեն նաև ՀՀ ԿԳՆ համապատասխան աշխատակիցները: Ենթաբաղադրիչի շրջանակներում 2015 թվականի ընթացքում մշակվել են նաև հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների, ինչպես նաև ուսումնական ծրագրերի վերանայման նպատակով ձևավորվելիք աշխատանքային խմբերի տեխնիկական առաջադրանքները, նշված աշխատանքային խմբերին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով հումանիտար և բնագիտական առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման միջազգային փորձագետների աշխատանքային պարտականությունների նկարագրերը, որոնք ներկայացվել են ՀԲ-ի հաստատմանը: Մշակվել է նաև ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների լուսաբանման ժամանակացույցը:

Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը

2015 թվականին «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից իրականացվել է ՆՄՀ գործառնական ընթացակարգերի վերանայումը: ՆՄՀ փորձնական փուլի արդյունքներով վերանայված ՆՄՀ ղեկավար ձեռնարկը և ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի համար հայտ ներկայացնող բուհերի ֆինանսական կարողությունների ստուգման աշխատանքների նկարագիրը հաստատվել է ՀԲ կողմից ս.թ. հուլիսի 8-ին: Ղեկավար ձեռնարկի հայերեն տարբերակը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի՝

21.07.2015 թ. թիվ 699-Ա/Ք հրամանով: Այնուհետև ս.թ. օգոստոսի 4-ին կազմավորվել է ՆՄՀ համակարգող խորհուրդը, որը ս.թ. օգոստոսի 10-ին սահմանել է ՆՄՀ առաջին շրջափուլի գերակայությունները: Ըստ այդմ, ս.թ. օգոստոսի 11-ին հայտարարվել է ՆՄՀ առաջին շրջափուլի շրջանակներում բուհերի կողմից դրամաշնորհային հայտերի ընդունման մեկնարկը, որի վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. նոյեմբերի 11-ը: Հայտերի ներկայացման ընթացքում առաջացող հարցերի պարզաբանման և բուհերին աջակցության ցուցաբերման նպատակով ս.թ. հոկտեմբերին կազմակերպվել և անցկացվել է երկօրյա աշխատաժողով: Սահմանված ժամկետներում 10 բուհի կողմից ստացվել է 11 հայտ: Այնուհետև «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից իրականացվել է ներկայացված հայտերի ամբողջականության և իրավասության գնահատումը: Զուգահեռաբար ընթացել են ՆՄՀ Հայտերի գնահատման հանձնաժողովի ստեղծման աշխատանքները՝ թեմատիկ և ֆունկցիոնալ փորձագետների ընտրության միջոցով: Ըստ այդմ, ս.թ. նոյեմբերի 30-ին ՆՄՀ համակարգող խորհրդի կողմից հաստատվել է փորձագետների ցանկը: Ընթացքում է հայտերի գնահատումը փորձագետների կողմից: Նախատեսվում է դրամաշնորհային պայմանագրերի կնքումն իրականացնել մինչև 2015 թվականի ավարտը:

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից.

1. Հանրակրթության որակի բարելավում
2. Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին:

«Հանրակրթության որակի բերավավում» առաջին բաղադրիչը ներառում է հետևյալ չորս ենթաբաղադրիչները. (1) Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում, (2) Կրթության որակի հետագա բարելավում՝

ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով, (3) Ուսումնական գործընթացում SCS-ի ներդրում, (4) Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» երկրորդ բաղադրիչը ներառում է հետևյալ չորս ենթաբաղադրիչները. (1) Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում, (2) Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում, (3) Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը, (4) Աջակցություն մանկավարժական կրթության բարեփոխումներին:

«Հանրակրթության որակի բերավավում» բաղադրիչի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրման նպատակով " Բեյքեր Թիլլի Արմենիա "ՓԲԸ-ի հետ պայմանագրի շրջանակներում վերլուծվել է Երևան քաղաքում ստեղծված նախակրթարաններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնները: Ներկայացվել է միջնաժամկետ հաշվետվություն:

Ենթաբաղադրիչ 1.3. Ուսումնական գործընթացում SCS-ի ներդրում

Էլեկտրոնային կրթական նյութերի ձեռքբերման նպատակով Համաշխարհային բանկը 2015թվականի ապրիլի 8-ին հաստատել է մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար Էլեկտրոնային կրթական նյութերի գնման մրցույթի փաթեթը, որի հիման վրա հայտարարվել է մրցույթ: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Ինստիգեյթ» ՓԲԸ, «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ և «Նովի Դիսկ-տրեյդ» ՓԲԸ կազմակերպությունները: Հաղթող է ճանաչվել «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ն: «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ի հետ հուլիսի 8-ին կնքվել

է պայմանագիր: Պայմանագրի կատարման աշխատանքները ավարտվել են նոյեմբերի 30-ին, էլեկտրոնային կրթական նյութերը հասանելի են <http://esource.armedu.am/> հասցեով:

Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

2015 թվականի փետրվարից սկսվել է ավագ դպրոցները նոր կահույքով համալրելու գործընթացը, որն ավարտվել է 2015 թվականի օգոստոսին: Բոլոր ավագ դպրոցներին տրամադրվել է աշակերտական նոր կահույք: :

2015 թվականի հուլիսից մեկնարկել և ըստ պահանջարկի միջնակարգ դպրոցների ավագ դասարաններին է տրամադրվել աշակերտական կահույք և շարժական համակարգչային լաբորատորիա :

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» բաղադրիչի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ենթաբաղադրիչ 2.3. Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը

2013թ. սեպտեմբերի 5-ին մեկնարկած Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում դրամաշնորհային փորձնական ծրագրերի իրականացումը 2015 թ. ավարտվել է ծրագրում ընդգրկված 10 բուհերում, որոնք են.

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
2. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, Երևանի պետական բժշկական համալսարան,
3. Հայաստանի ազգային ագրարային համալսարան
4. Երևանի պետական համալսարան
5. Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
6. Հայ-ռուսական սլավոնական համալսարան
7. Ճարտարապետության ու շինարարության Հայաստանի ազգային համալսարան

8. Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիա

9. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

10. ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Բուհերում ընթացել է իրականացված ծրագրերի աուդիտ՝ ԿԾԿ ԾԻԳ-ի և Գրանդ Թորնթոն Աուդիտ ԷՍ-ԷՌ-ԷԼ կազմակերպության միջև ս.թ. հունվարի 13-ին կնքված թիվ 1/15 պայմանագրի շրջանակներում: Գրանդ Թորնթոն Աուդիտ ԷՍ-ԷՌ-ԷԼ-ի կողմից ամփոփվել և ԿԾԿ ԾԻԳ-ին են ներկայացվել բուհերի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի աուդիտորական եզրակացությունները:

Դրամաշնորհային ծրագրերն ամփոփած բուհերը ներկայացրել են ամփոփ ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ, որոնք ուղարկվել են ՆՄՀ համակարգող խորհրդի հաստատմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է նաև ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի լուսաբանման աշխատանքները, մասնավորապես՝ ընտրվել է ՆՄՀ փորձնական փուլով իրականացված 10 ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական հոլովակի նկարահանման և ֆոտոռեպորտաժի իրականացման ծառայություններ իրականացնող կազմակերպությունը, որն իրականացրել է համապատասխան աշխատանքները: Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է նաև ՆՄՀ փորձնական փուլի արդյունքների վերաբերյալ տեղեկատվական գրքույկը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որը տպագրվել է և բաժանվել «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի ամփոփիչ և «Կրթության բարելավում» վարկային ծրագրի մեկնարկի համաժողովի մասնակիցներին: ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի լուսաբանումն ու քննարկումն իրականացվել է նաև վերոնշյալ համաժողովի ընթացքում՝ թե պլենար քննարկումների, թե առանձին խմբային աշխատաժողովների մակարդակում: **ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի լուսաբանումը լայնորեն իրականացվել է նաև առանձին բուհերի կողմից կազմակերպված հանդիսավոր բացման միջոցառումների ընթացքում, ինչպես նաև 2015 թ. սեպտեմբերի 11-12-ին ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար կազմակերպված համաժողովի ընթացքում: ՆՄՀ փորձնական ծրագրի**

արդյունքները քննարկվել են նաև ՀԲ կողմից 2015 թ. սեպտեմբերին կազմակերպված սեմինարի ընթացքում:

Այս ուղղությամբ նախատեսված աշխատանքներն ավարտվել են: ***Ենթաբաղադրիչ 2.4. Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին***

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և ամփոփվել է ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող պետական հինգ բուհերի համար (Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Վանաձորի պետական համալսարան, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ), ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն ուղղություններով լաբորատորիաների գնման նպատակով միջազգային մրցակցային գնման գործընթացը: Մրցույթի արդյունքները ՀԲ կողմից հաստատվել են ս.թ. հունիսի 18-ին: Պայմանագիրը կնքվել է ս.թ. հունիսի 26-ին: Լաբորատոր սարքավորումների մատակարարումը ավարտվել է 2015 թ. նոյեմբերին: